



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



59

ՄԽԻԹԱՐԵԱՆՔ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

1701 - 1901

ԳՐԵՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍ Զ. ԱՂԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

ԹԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1902

19 092
-28

ՄԻԹԱՐԵԱՆՔ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

1701 - 1901

891.99.092

92 - 6 NOV 2011

4-28

W

ՄԻԻԹԱՐԵԱՆՔ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

1701 - 1901

ԳՐԵՑ

ՅՈՒՀԱՆՆԻՍ Յ. ԱՆԱՆ

1009
7396



ՎԵՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1902

821.00.025
85-58

JAN 2013

65.433

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1901 - 1901

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1901

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայ Գրականության ոսկի Մատենին մեջ 1901 տարեյ Սեպտեմբեր ամսոյն Տր ամսն ձին տաւերոյլ արձանագրուած է:

Միտրար Աբրահոր Ս. Ղազար հաստատած Միտրաւնոչիւնն այդ օր կը տօնէր իր գոյութեան երկհարիշաւեայ յորեւանը: Այս յորեւանին կը մասնակցէր նաև ընդհանուր Ազգև, որ իր ղեգոչին և գրականութեան երկրորդ ծնունդն ոչ վերանորոգոչիւնն իրաւարը պարտական է Միտրարայ և Անոր Աշակերտաց:

Յորեւանի բռնակաւէն տարի մը յառաջ, արևմտեան և արևելեան Հայերը սխաժ էին արդէն գրադիյ Միտրարեան Միտրաւնոչեանը. ոռչս և բրքահայ քերքերն օրէ օր կը ստոռչանային Միտրարեանց վրայ գրոռած յօդոռածներոյլ. պատմական, բանասիրական, մատենագրական և կրօնական տեսակետներոչ վրայ հիմնեայ, մեկէ աշեյի Գրիւներ մատնանիշ ըրին Սերաստացի Միտրար Աբրահոր և Աշակերտաց յառաջ քերած գրական շարժունը: Փափարքի է որ այս ամէն յօդոռածները հատորի մը մեջ ամփոփուչին:

Մտրերոչ այս բարեացակամ տրամադրութեան ներքև էր՝ որ իմ յարգոչ բարեկամ,

Բիզզանդ էֆ. Բէչեան, արտօնատեր խմբագրապետ հայաբերք առաջնակարգ Օրաբերք Բիզզանդիոնիին, առաջարկեց ինձ որ համառօտ ուղղադրեմ Մխիբարեանց գրական գործունէութիւնը հանդէպ հայ Գրոց բրոցիին: Չէի կրնար բնականապէս մերժել այս պատուարներ առաջարկն և կը յանձնէի իրեն «Մխիթարեանք Գրականութեան առջև, 1701-1901» ուսումնասիրութիւնը:

Այս ուսումնասիրութիւնն է ահա որ աւանձնիկն ի հրատարակ կը հանկեր, ի խնդրոյ բազմաբիշ բարեկամաց և գրասեր անձնաւորութեանց:

Աշխատասիրութիւնս, գիտեմ, համառօտ է. նպատակս սակայն պարզապէս ուրուագծել է և ոչ թէ պատմագրել Մխիբարեանց գրականութիւնը. հատորներ պէտք են լաւագոյն եղանակաւ և մանր ուսումնասիրելոք համար իշխանաւոր Մխիբարեան Հանձարիին կամ Հեղինակիին գրութեան ուր, գիտութեան չափն ու յառաջ բերած ազդեցութիւնը:

Ընդհանուր ըսյն գիժերով, համառօտ և ձիշտ պատմական տոյգ տեղեկութիւններով ծանօթացրեց թէ ինչ ըրած են Մխիբարեանք տոհմային գրականութեան, բանասիրութեան և յեղուի համար, ահա իմ ամենահամեմատ կետ նպատակիս:

Իմ այս յայտարարութիւնս անընդունաբար է մատնանշելոք ուսումնասիրութեան նպատակը:

ԵՐԿՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

Մ Խ Ի Թ Ա Ր Ա Բ Բ Ա Հ Օ Ր

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ք Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Ն Դ Ե Պ

1700 — 1900

Ժէ Դարու սկիզբները տոհմային Գրականութիւնն ամենախեղճ վիճակ մունէր. Գիտութիւն և Գրականութիւն բառերը գոյութիւն չ'ունէին. մտաւորական մակարդակն այն վիճակի հասեր էր, որ Ազգին մէջ մէկու մուսումնականութեան աստիճանը կը չափուէր հետեւեալ հարցերով. քանի ա կամ ի կայ «Փանք ի բարձունս» և «Աշխարհ ամենայն» ի մէջ. ո՞վ որ առանց տատամելու պատասխանէր, անմիջապէս Գիտնական, Մագիստրոս և Ծայրագոյն վարդապետ օրտոյններուն կ'արժանանար:

Ուսումնասիրութեանս նպատակը չ'է այս խեղճ վիճակին բազմադիմի պատճառները պրպտել և մատնանիշ ընել, որոնք արդէն

բազմահատոր գրքերու կը կարօտին. ինչ որ ալ ըլլան սակայն այս պատճառները, զէթ սա՛ անուրանալի է թէ եօթնևտասներորդ դարուն տոհմային Գրականութեան անկու- մին և լեզուի աղաւաղութեան մեծապէս նպաստած է Զանկեցիի լեզուն:

Զահուկ վանքն, ուր եկած և բնակութիւն հաստատած էին Դոմինիկեան Հայրերն ու ասոնց արբանեակները նկատուող հայ Վե- դարաւորները, ամենէն աւելի անկումի և ա- ղաւաղութեան առաջնորդած է հայ լեզուն ու Գրականութիւնը: — Դոմինիկեան Հարց և Միաբանողաց (Unitor) լատինարանու- թիւնը և մարմաջը Հայ լեզուն ձուլելու Լա- տիններէնի վրայ, անմիջապէս կասեցուցին լեզուին բնական զարգացումը: Ծնորհիւ այն վանական Գարոցին, որ միշտ Ս. զգին մէջ ոչ համակիր բարեկամներու լեզէն մ'ունե- ցած է, գաղափարներու փոխանակութիւնն անբնական վիճակի մը վերածուեցաւ, որով թէ լեզուն և թէ գրականութիւնն առաջ- նորդուեցան այնպիսի խորունկ և մահաար- սուռ անդունդի մ'եզերքը, ուսկից երկուքն ալ հեռացնել դժուարին էր, չ'ըսելու համար անկարելի:

«Մեծ ու հիմնական նորոգութեան կարօտ էին Հայկական լեզուն և Մատենադո- րիւնը». այս նորոգութիւնը սակայն կարելի չ'էր սպասել Միաբանողներէն և ոչ ալ ա- նոնց պարագուիս եղող Դոմինիկեան Հայ- րերէն, որոնք «անհնուն ըլլալով Հայ լեզուի

հակաս հանգամանքներու և ջանալով զայն ձուլել ստար լեզունեղութեան, պատճառ եղած էին, որ լեզուն իր ակզբնական պարզութիւնը և գեղեցկութիւնը յաւետ կորսնցնէր¹»:

Այս նորոգութիւնը կարելի չ'էր նաև սպա- սել երկար դարերու կեանք և արդիւնք ու- նեցող վանքերէն. Սիւնեաց, Անապատի, Գան- ձակայ, Գրակայ, Կաղզուսեաց, Հաղբառի, Մայրագոմի, Եղապարի, Գրագարի, Ակնե- յոյ և Գռնեղոյ Մենաստանները խոր ազի- տութեան մէջ թաթխուած, կիսաւեր վիճակի մէջ կը գտնուէին:

Ստեփանոս Վանեցի, Ներսէս Ենոքեացի, Ներսէս Լաւրրունացի, Սամուէլ Երեց, Սար- գիս Ենոքեացի, Մատրեոս Ուսնայեցի, Խա- լատոշր Տարունացի, Գրիգոր Տղայ, Կիրակոս Գանձակեցի երիցս սրբազան Գրիչներուն յա- ջարդած էին Յովնանեան ֆակեցիի, Եսայեայ Նջեցիի, Մարգար Օծովեցիի, Կոստանդին և Յովնանեան Կաղզուսեցիի նման Վարդապետ- ներ, որք առաքեալներն եղան լեզուի աղա-ւաղումին: Մատենագրական ուսուցիկ խըն- դիրներ յարուցին և սնամէջ պայքարներու ծնունդ տուին:

Ասոնք ալ ուրեմն իբր անկատար Դէմքեր չ'էին կրնար Հայ լեզուին և Գրականու- թեանը Վերանորոգիչներն ըլլալ:

1. Տես «Նոր Մատենագրութիւն» Հ. Գարե- ղին Վրդպ. Զարբհանալեանի. Վենետիկ — 1878 — էրես 584:

Կրթի, Մուսուլմանութեան և Տգիտութեան այս Գարուն մէջ Նախախնամութիւնը յարոյց վերջապէս այն սուրբ և յաւէտ պաշտեի Մարգը, որ իբր երկրորդ Մեսրոպ Սեբաստիոյ խորբէն գրականութեան կըրկէսն իջնելով, յաջողեցաւ փրկել իր տոհմային լեզուն և գրականութիւնը:

Մխիթար Արքան, որուն կենսագրութիւնը տաք սրտով, թէև ոչ այնքան քննադատութեան անաչառ բովէն անցընելով հրատարակեց Սաչկոնց Հայաթերթ Բիւզանդիոնի մէջ, եղաւ այն մեծ և արդիւնաշատ վերանորոգիչն, որուն կը պարտի Հայութիւնն իր լեզուին և գրականութեան երկրորդ փրկութիւնը:

Սերկար տատամսումներէ, բազմադիմի և այլազան արգելքներէն վերջ, այս Սեբաստացի Վարդապետիս առաջին գործն եղաւ լեզուին և գրականութեան զարգացման ու յառաջդիմութեան համար մխարակական Մարմին մը հաստատել, որուն աւագ պարտականութիւնն ըլլար տոհմային լեզուն և Գրականութիւնը վերականգնել, ծաղկեցընել և Ազգին վրայ տարածուած տգիտութեան և նախապաշարման թանձր քօղը մի անգամ ընդ միշտ պատուել:

Մխիթար Սեբաստացին իր Մխարանութեան հիմը հաստատած է ի սկզբան Կ. Պոլսոյ մէջ, Բերայի Ֆրանսական Դեսպանատան Սէն Լուի Եկեղեցին: Եթէ կարելի ըլլար դէպի 1701 Սեպտ. 8ը ետ դառնալ և այդ օրն այն Գափուշինեան Հարց պատկա-



Մխիթար Արքայ

նող Եկեղեցին մուտ գործել, այն ատեն հնար էր տեսնել Մխիթար Վարդապետն, որ փախըստականի ցուպն ի ձեռին, կ'ուխտէր իր 10 Միաբաններուն հետ միշտ և ամէն ուրեք հաւատարիմ մնալ իր ձեռնարկած կըրթական և բարենորոգչի մեծ գործին¹:

Թէ ինչ սկզբունքի կամ գաղափարականի կը ծառայէր Մխիթար Աբբան Միաբանութիւն մը հաստատելով կամ հիմնելով, այսօր կատարելապէս բացայայտ է և պատմականորէն անհերքելի. Մխիթար Աբբաչօր նպատակն էր կրօնքի ամրակու սուրբ պարիսպներու վրայ կանգնել՝ լուսատու գիտութեան մեծ փարոս մը:

Մխիթար Վարդապետին ծրագրին էր ուսմամբ Ազգին զարգացման աշխատիլ և վերջին դարերու մէջ մուտ գտած կրօնական թիւր սկզբունքները սրբագրելով կամ ուղղել տալով՝ մատնանիչ ընել Ազգին եկեղեցիին նախնական կոյս վարդապետութիւնն ու չափ և

1. « Իսկ միաբանեալքն էին յայնժամ նակ
 1. Մխիթար Վարդապետ
 2. Եղիա »
 3. Յովհաննէս »
 4. Գէորգ »
 5. Մանուէլ »
 6. Եղբայր Ղազար Ահնջի
 7. » Յովհաննէս
 8. » Աղաբիա
 9. » Գաբրիէլ
 10. » Միքայէլ.

սահման դնել այն ամէն օտարամուլ Վարդապետներուն գրչին կամ քարոզներուն, որոնք սանձարձակ և եպերելի համարձակութեամբ մ'ամէն վարդապետութիւն մուտ կամ ըստ հաճոյս կը մեկնէին: Մխիթար Ազգին կրօնական բաժանման ալ գաղափարակեց չ'էր:

Այս յառաջարանէն կրնանք ուրեմն ամենայն փտահոսթեամբ և ապահովութեամբ հետեցնել, որ Մխիթարայ սկզբունքներէն էին Լեզուի բարեփոխում, վերակենդանորէն տոննայիս թեկի Գրականութեան և Որումն ծառայում: Այլ կերպ սկզբունք կամ դաւանանք չ'էր ալ կրնար ունենալ քանի որ Սերաստիայէն մինչև Պոլիս և Պոստեն մինչև Վենետիկ հետզհետէ և կարգաւ ամէն մէկ վանական հաստատութեան դրուներն ափ առած և տեսած էր տգէտ և ապիկար Վեղարաւորներուն ուսումնական խեղճուկրակ վիճակը:

Մխիթար իր Միաբանութիւնն անգամ մը հաստատելէն և գոյութիւնն ալ ապահովելէն վերջ, սկսաւ եռանդեամբ գործել: Արդէն ինքն Պոլիս գտնուած միջոցին զրական կեանքի սկիզբն ըրած էր, Բերայի Մեծ Փարմաք — Գափու գտնուող տնակի մը մէջ, ուր կը հաւաստուի թէ Ղալաթիոյ Փրկիչ Եկեղեցիէն հալածական իր հետեորդ-աշակերտներուն հետ եկած և ասպնջականութիւն գտած էր ութսունամեայ պառուս հայ կուսանի մը քով: Հոն թարգմանած է նոյն ատենի լատինախառն գրաբառով Թովմաս

Գեմրացւոյ «Նմանոտքիւն Յիսուսի» ոսկի մատեանն ու գրած իր քարոզները և մտածականները: Այս երկու գործերն ալ 1700ին վերջերը Պոլիս հրատարակուեցան և ամէնուն բայց մանաւանդ կղերական դասուն ուշադրութեան առարկաներն եղան: Իր բուն գրական գործունէութիւնը սակայն կը սկսի Վենետիկէն. հոն, հեռի իր արեւակից թըշնամիներէն, Մխիթար Արքան հետզհետէ գրական հրապարակն ողողեց զանազան գըրքերով և մաքառեցաւ այն ատենուան աղաւղեալ և անկերպարան, անիմանալի լեզուին դէմ. դժբաղդարար յաջողութեան դափնին չի կրցաւ ձեռք ձգել, որովհետև ակամայ և իր Միաբանութեան ապագայ զոյութեան համար ստիպուած էր շոյել ընդհանուրին լեզուական ճաշակը: Այսպէս իր գրութիւններուն և թարգմանութիւններուն մէջ մաքուր և տիպար հայերէն լեզու մը չի գործածեց. պէտք չ'է սակայն մոռնալ թէ այս թերութիւններն աւելի նոյն ժամանակի բերմունք ու ամենէն ընդունուած աղաւղեալ, քերականական օտար կանոններու արգասիք և ծնունդ էին, և ո՛չ թէ արդիւնք անհմտութեան: Մխիթարայ անտիպ նամակներուն և իր աշակերտաց համար ի գրի առած խրատականներուն լեզուն պարզ և մաքուր է: Այս թղթերը ցարդ ամենայն մեծ ինամքով կը պահուին Ս. Ղաղարու Դիւաններուն մէջ:

Մխիթար Աբբաժօր գրական գործունէու-

թիւնն ուսումնասիրելու համար, պէտք է իր հեղինակած երկասիրութիւնները բաժնել երեքի. ա. վարդապետական, բ. ուսումնական և գ. քերականական:

Ա. իր վարդապետական անգրանիկ սպազիր երկասիրութիւնն է Մեծիկ Ալքերդի Աստուածաբանոտքիւնը, որ սպուած է 1713ին ի Վենետիկ Պրիթոլի իտալացիին Տպարանը: 680 էջ կը պարունակէ այս աստուածաբանական աշխատասիրութիւն, ուր Սերաստացի վեղարաւորը ձկուն և կտրուկ կը վարդապետէ: Թարգմանութենէ աւելի ինքնահեղինակութիւն մ'է այս աստուածաբանական մատեանս, որուն գրութեան ոճն ու յառաջ բերուած պատճառաբանութիւնք բացայայտ են և տոհմիկ գրոշմն ունին: Թէև ստոյգ է թէ Մխիթարայ առաջնորդս օտար աստուածաբան մ'եղած է, բայց և այնպէս ինքն կրցած է հայացնել իր հեղինակը, տոհմային Գրիչներու և Հայրապետներու այլ և այլ բազմաթիւ վկայութեամբք:

Մխիթար՝ մեկնողական գրութեանց մէջ մանաւանդ իր տրամարանութիւնը, ընդարձակ հմտութիւնը և լեզուական առատ պաշարը մասնանիշ քրած է և կերպիւ իւրիջ հաւասարած՝ մեր երբեմնի մեծ Հայրապետներուն վերացական (ascétique) և կրօնաւորական ոգիին և թօխչին: Այս մասին իր Ժողովողի, բայց մանաւանդ Մատթէի Մեկ-

նութիւնը, որ 1737ին յայտնուեցաւ՝ հ. գրուելու գործոցներ կրնան համարուիլ: Մատթէի Մեկնութիւնը ժամանակին եկեղեցական Գասուն, Ամիրաներուն և Պատուելիներուն ձեռքի սովորական գիրքն էր: Տարիներ վերջ Մատթէի Մեկնութեան սերէն բռնուած է նաև Պէգճեան Ամիրան, որ՝ իբր յայտարար նշանակ իր գոհունակութեան և գնահատման՝ ճիշտ երեք քառորդ դար վերջ յատուկ պատգամաւորութեամբ Ս. Ղազար կը խրկէր Եպիսկոպոսական ծանրագին թագ և շուրջառ մը², հանդերձ մարգարտաշար ու կեճամուկ գորգով մը Մխիթար Արքայհօր Գերեզմանաշիրմին վրայ փռուելու համար³: —

1. Մատթէի Մեկնութեան մատեանը Պոլսոյ մէջ մեծ ընդունելութիւն գտաւ. կղերը մանաւանդ հիացաւ Սերաստացի Աբբային մեկնաբանական հանճարին վրայ. կառնուող թէ Կ. Պոլսոյ Յովհ. Կոլոտ Պատրիարքն այս գիրքն ընդունելուն, ըսած ըլլայ. «Քրակ և հիւնք քակ դրամ փառնեցի Գրոց հաւնար, բայց Մատթէի Մեկնութիւնն երևեալուն՝ անունք անկերք պարսպ և անօգուտ մնացին»: Տես «Նոր Մատենագրութիւն» 2. Գար. Վրդպ. Զարբ. հանա եանի. Տպագրութիւն 1878. Երես 595.

2. Եպիսկոպոսական շուրջառը վենետիկ չի հասած աներևութացած է. թագին վրայ ընդելուզեալ կիսաբարձրակ ազամանդն ալ փոխուած է: Մխիթարեան Հարք ճուղելով Ամիրան վըռտացընել, բացարձակ լուութիւն պահած են հանդէպ պատահած գողութեան:

3. Պէգճեան բարեխիշտակ Ամիրային վե.

Վարդապետական ընտիր Տաղեր, Մեղեղիներ, Մաղթանքներ և Երգեր ալ ունի, որոնց միայն մէկ մասը տպագրութեամբ ծանօթ է մեզի:

Բ. Ուսումնական ճիւղին մէջ ալ Մխիթար ունեցած է իր բաժինը: Թուարանութեան, Երկրաչափութեան, Տօմարագիտութեան, Աստեղագրութեան անտիպ դասագիրքեր յօրինած է և անոնց վրայէն դաս տուած իր աշակերտներուն: Նմանապէս Փիլիսոփայութեան, Ճարտասանութեան երկասիրութիւններ ձգած է ձեռագիր, ինչպէս նաև Իմաստասիրութիւն մը, — Բարոյապետ և քաղաքական, — Արիստոտէլի հեռուգրութեամբ:

Գ. Քերականութեան մասին, Մխիթար մատնանիշ ըրած է իր հայկաբանութիւնը: 1730ին հրատարակած է իր հայերէն Գրաբար Լեզուի Քերականութիւնը, որուն վերնագիրն ալ իր ձեռօք գրած է. «Քերականութիւն գրաբառ լեզուի հայկական սեռի. շարագրեցեալ աշխատասիրութեամբ Տեառն

1730

նետիոյ Մխիթարեանց ըրած պարզեր և հանդէպ Մխիթարեան Հարց անուցած համակրութիւնն ու սերը կ'երևի թէ ոմանց ջիղերուն չպած է: Այվազեան Աբրահամ էֆէնտին առանց փաստի և առանց ալ մատնանշելու իր աղբիւրը՝ Մանգումէի էֆ. քերարի մէջ ուզեց հերքել վերը ըսածներս: Գրե՛ջ մը սոսկայն հարկ չի տեսնար պատմական աւանդութեանց վրայ հակահասուել:



Մխիթարայ Վարդապետի Սերաստացւոյ . . .
 Ի վարժունն սրամտից գասատան իբրոյ և ի
 յօգուտ այլոց ամենից՝ որք ունին զփափաք ի
 գաւրիս իմաստից դրամք քերականութեան
 մտանել» : Այս գրաբառ Քերականութիւնն
 ալ Ազգէն մեծ ընդունելութեան արժանա-
 ցաւ և դարմը շարունակարար իր աշակերտ-
 ներուն և Հայկաբաններուն Մենտորն ու Ա-
 ուշնորդն եղաւ : Դեռ հիմա ալ կարելի է
 օգտակարտպէս թղթատել այս պատուական
 Քերականութիւնն, որ Չամիչեանի, Աւետի-
 քեանի և Բագրատունիի ընդարձակ Քերա-
 կանութիւններուն ծնունդ տուաւ : Չեռազիր
 ընդարձակ աշխարհաբառ լեզուի Քերակա-
 նութիւն մ'ալ ունի, որուն մաքուր աշխար-
 հիկ լեզուն արհամարհելի չ'է : Քերականու-
 թեանս համառօտութիւնը տպագրուած է
 1727ին : Երկու հատոր Հայկաղեան բառա-
 րան ալ յօրինած է, գրաբառէ աշխարհա-
 բառ և աշխարհաբառէ գրաբար, որոնք հետ-
 ղհետէ 1749ին և 1769ին կրկին տպագրու-
 թիւններ ունեցած են ¹ :

1. Չ. Մատթէս Մաղաք - Թէոփիլեանց կը
 գրէ Ունի զլուսափայլ և զընդարձակ
 Մեկնութիւն աւետարանին Մատթէի, տպեալ
 ի 1757, զընդհանուր նախկին բառարան հայ-
 կազնեան լեզուի, տպեալ ի 1749, զՔերակա-
 նութիւն գրաբառ ընդարձակ տպեալ կրկին
 անգամ : Քերականութիւն աշխարհաբառ և
 աանկական լեզուի, տպեալ ի 1727 : Յօրինեալ
 ունի զշարականս, զբրիտանեական գրաբառ

Մխիթար Աբբան քաջ հմուտ իր մայրենի
 լեզուին և գրականութեան, կրցաւ վերջա-
 պէս իր կենդանութեան տանել իրեն յա-
 ուաջ բերած գրական շարժումին օգուտները :
 Իր Գրոց, Երկասիրութեանց և Թարգմանու-
 թեանց գտած ընդունելութիւնը և իր աշա-
 կերտներուն մատենագրական գործունէու-
 թիւնը կանուխէն արդէն իրեն կրցան ըմբռ-
 նել տալ թէ իր փոքր և աղքատին Միաբա-
 նութեան ածուին մէջ այնչափ քրտինքով
 ցանած սերմնահատիկները տարիներու և
 դարերու յարածուն թաւալազրոր ընթացքին
 մէջ պիտի արդիւնաւորին և պաղարբրին :

Երբ այս մխիթարական յոյգերով աուցեալ,
 Մխիթար օրէ օր կը յաջողէր գէթ Պոլսոյ
 մէջ դէպ ի լեզուի մարութիւն բաղձանք
 մ'արթնցնել, մահը 1749ին և Ապրիլ ամսոյ
 27ին կու գար հրաւիրել զինքն յաւիտեանա-
 կան հանգստեան :

և աշխարհաբառ : Եթող ևս անտիպ զբազում
 գրուածս, այսինքն զհոգևորական մտածու-
 թիւնս, զկանոն վանականս և զգիրս քաղա-
 քավարութեան և զմեկնութիւն դժուարմաց
 բանից Սուրբ Գրոց, զոր և ակնարկէ ի յեշա-
 տակարանի Մեկնութեան Գրոցն Ժողովի,
 զԹարգմանութիւն աստուածաբանութեան Սըր-
 բոյն Թովմայի գործակցութեամբ աշակերտաց
 իւրոց, և զայլ զլիւսաւոր բանասիրական մակա-
 ցութիւնս համառօտիւ, զորս ինքնին դաս ա-
 սէր աշակերտաց իւրոց » : Տես Կենսագրութիւն
 Նրեկել Աբանց. Երես 826 :

Կը մեռնէր Նա, այլ ո՛չ իր անմահ գործը, իր արեան քրտինքովը սնած և մեծցած Միաբանութիւնը:

Թէև մէկ անձ մըն էր Մխիթար, բայց կարելի է զԱյն նկատել միանգամայն Եւսանձնութիւն մը, որովհետև իբր Հայ մարդ տիպար էր տոհմիկ մարդասիրոչքեան, իբր գրական անձ՝ տիպար ոչտոհմասիրոչքեան և իբր ֆրանսեայ՝ գաղափար սրբոչքեան: Այս եռոտանոյն վրայ արձանացած զինքն ուսումնասիրել և քննադատել պէտք է, որպէս զի կարելի ըլլայ ըմբռնել թէ Մխիթար Սեբաստացի կրօնաւորը Խորհրդաւոր միութիւն մըն էր, մանաւանդ տարրացումն՝ ըսեմ՝ այն միտախք և անծանօթ դոյութեան, որ կը կազմէ տոհմիկ մարդասէր, գրական (գիտական) և կրօնական (վանական) գաղափարներու անձնաւորութիւնը կամ մարմնացումը:

*
* *

Մխիթար Աբրահամ մահը չ'էր կրնար իր նոր հաստատած Միաբանութիւնը ցրուել տալ:

Մխիթար Սեբաստացին՝ իր կենդանութեան՝ շատ բան քաղաքականութեան և հեռատեսութեան համար զանց առած էր. այսպէս երբեք չ'ուզեց իր պաշտօնական լեզուն մաքրել լատինաբանութենէ և ոչ ալ փոխել պատարագի ժամանակ գործածած լատինաձև զգեստները, որովհետև իր գործին և ձեռ-

նարկին յաջողութեանը համար ուրացաւ մէկէ աւելի տխուր պարագաներու մէջ իր եսը, իր համոզումն ու իր անհատական տեսութիւնը: Ինչ որ սակայն ինքն չ'ուզեց և կամ չի կրցաւ կատարել, ըրաւ իր անմիջական Յաջորդը, Հ. Ստեփանոս Վրդպ. Մեղրեան, որ 1750ին թափուր մնացած արբահայրական Աթոռը ժառանգեց, Միաբաններուն միաձայն քուէներովը:

Մեղրեան Աբրահամ, որուն շատ և շատ բան կը պարտի Ս. Ղազար և որ իրապէս արժանի էր այս մեծ և պատասխանատու պաշտօնին, բարեօք պաշտօնավարութեամբ իր երջանկայեղատակ Նախորդին գործը կազմակերպեց: Սկսաւ ամէն բանէ յառաջ իր հպատակ Միաբան Վարդապետներուն գրական գործունէութիւնը մտրակել:

Չարգացնել մայրենի լեզուն, ծանօթացընել Նախնեաց ձեռագիր երկերն, ահա՛ այն առանցքն, որուն շուրջ եկան հաւաքուեցան Մխիթարայ ձեռնասուն անդրանիկ աշակերտները:

Թէև այս Մխիթարեան ուսկիւրայ Վարդապետներուն գործունէութիւնը զուտ ascétique (կրօնական, ճգնողական) եղած է, բայց պէտք չ'է մոռնալ թէ գաղափարաց յառաջգիմութիւնը ժամանակի գործ է: Անկատար կամ ոչ զոհացուցիչ կրնայ նկատուիլ ասոնց գրական գործունէութիւնը, բայց յառաջ բերած գրական շարժումին բոլորովին արհամարհելի և ոչինչ գործ կամ ձեռնարկ

մը չ'էր. ասոնք ամէն բան ոչինչէն սկսան: Գարձեայ ասոնք էին որ ծնան Մումայներու, Ազոնցներու, Աշետիքեաններու, Չաւչեաններու և Ինձիձեաններու նման սերունդներ, որք իրենց նախորդներուն ձգած ձեռագիրներէն օգտուեցան և անոնց հարթած ուղիէն ընթացան:

Մխիթար Արքաճօր անդրանիկ ձեռնաստեն աշակերտներուն մէջ գրական առաջին դէմքն է Հ. Մատթէոս Վարդապետ. Գարսապաշեան:

Հ. Մատթէոս վարդապետ՝ Եւզոկիացի է և ծնած՝ 1668ին: Մխիթարայ աշակերտած է 1714ին, որուն Քարտուղարն ու ներքին Խորհրդականն եղաւ: Մխիթար Սեբաստացիէն վերջ Հ. Մատթէոս Վարդապետ ամենէն աւելի ներհուն և գիտնական առաջին Մխիթարեան Միաբանն եղած է իր կարգակիցներուն մէջ: Կենսագրութիւն Երևելի Սրահեցի հեղինակ Հ. Մաղաք — Թէոփիլեանց կը հաւաստէ թէ յետ Մխիթարայ Արքաճօր, Մատթէոս Վարդապետ էր խելամուտ և ներհուն ամենայն մակացութեանց ըստ կարգի. նմին իրի եղև և զլուխ ամենայն դասասացութեանց ի վնս մեր ի Վենետիկ, մտնւանդ ի փիլիսոփայութեան և յաստուածաբանութեան, մինչև ցյետին ձերութիւնն, որպէս և ըստ յօրինուածոց մատենից՝ շաբադրեաց յետ Մխիթարայ զառուելագոյն մատենաս»: (Տես անդ. երես 739):

Հ. Մատթէի ոճը բառազարդ և պերճաբան է. ինքն եղած է Միաբանութեան մէ-

ջէն լատինախառն գրաբարը փտարողը: Այն միջոցին այսպիսի ձեռնարկ մը բուսական փտանգաւոր և յանդուգն գործ մըն էր. որովհետև այն Մխիթարեանն որ մաքուր և զուտ գրաբար հայերէն գրէր, իսկոյն «հեղեոյն» կը նկատուէր և իբր այսպիսի՝ Հռոմայ գահուն առջև կ'ամբաստանուէր հակառակորդներէն. այս էր պատճառն որով Մխիթար Արքան մինչև իր կենաց վերջին օրը չ'ուզեց մերկանալ իր լատինաձև պատարագի զգեստներէն և յղկել իր հայերէն գրաբար լեզուն:

Հ. Մատթէի տպագիր երկատիրութիւններն են

ա. Վարդ Ս. Լուսաւորչիկն.

բ. Խորհուրդ Ստորաճառապաշտոնքեան.

գ. Մտածոչիւն շարչարսևացի Քրիստոսի

դ. Հիշմանկ բարեբանութեան Ս. Աստուածածնի:

Անտիպ մնացած է իր

ա Մխիթար Արքաճօր ընդարձակ կենսագրութիւնն, որուն համառոտութիւնը միայն 1815ին տպագրուած է:

Գրած է նաև իր

բ. Ոչխտիկ ժամանակագրութիւնը, հիմնարկութեան թուականէն մինչև 1750.

գ. Պատմութիւն վարդաց Տ. Կոմիտասայ Բախաւայի.

դ. Շաշիղ հոգևոր.

Կ. Փոքր Տրաւարաւնոչիւն
 Գ. Մեկնոչիւն քրոց Ս. Պաշտօնի առ
 Հռոմայեցիս և առ Կորնթացիս:

— 85 տարեկան, 1772ին Նոյեմբեր ամ-
 սոյ 6ին վախճանած է այս Մխիթարեան
 Վարդապետս, որ իբր հայկարան առանձին
 տեղ մը գրաւած է գրական տարեգրոց մէջ¹:

— Արգիւնաւոր գրական գործունէութիւն

1. — Վարդապետին յիշատակը մինչև ցայս-
 օր ակնածանօք կը յիշուի Վենետիկոյ Մխի-
 թարեանց մէջ: Իր սրբակենցաղ կեանքը, բայց
 մանաւանդ իր Մխիթար Աբբա՛ճօր ընկերակից
 ԸԼԱՄԸ, բացառիկ պատիւներու արժանացուցած
 է զինքն: Մարմինը՝ ամրակազմ արկեղ մէջ
 ամփոփուած՝ Վանուց Եկեղեցին յատուկ տեղ
 մը գրաւած է: Հանդերձ մարմարեայ վիմա-
 զրով և հետեւեալ արձանադրութեամբ:

Դիր հանգստեան՝ Հայր Մատթէի,
 Եւզսկիացւոյ Վարդապետի:
 Մեծ Աբբային՝ Մխիթարայ,
 Համալսարանի աշակերտի:
 Ներանձնութեան և իմաստից,
 Վարժիչ ներհուն և հոգեւի:
 Նոյն վերբերիչ՝ վարուց բարեաց.
 Եւ օրինակ՝ որոց զկնի:
 Ի սեփական՝ յայս տապանի:
 Ութսուն և հինգ՝ ամաց փոխեալ,
 Եւ յիշատակ իւր օրհնելի:

Յամի Տեառն 1772 ի Նոյեմբեր 6:

մ'ունեցած է նաև Հ. Մկրտիչ Անանեան,
 Պօլսեցին, որ 1714ին ծնած է:

Յաջողակ գրիչ, Հայկարան, «գօրաշոր և
 յաջող բանիչ» բեմասաց մ'եղած է և զլիս-
 ւոր աշակից Մխիթարայ Հայկաղնեան բառ-
 գրքին համար:

Իր ուսումնականի և աստուածարանական
 գիտութեանց մասնագէտի համբաւը մանա-
 ւանդ Պօլսոյ մէջ մեծ եղած է, ուր արդէն
 երկար տարիներ ալ պաշտօնավարած է:
 «Գոյիև ի տես լորս, կ'ըսէ ժամանակակից
 Գրօնիկագիրը Հ. Մաղաք — Թէօփիլեանց,
 յորոյք ի վարդապետաց և յերիցանց և ի
 պարսպեղոց յոչսուսն գիտաշրեան»: Ծնորհիւ
 մէկ քանի յաշաղկոտ ազգեցիկ եկեղեցական
 անձնաւորութեանց, Հ. Մկրտիչ չի կրցաւ
 Պոլիս մնալ ու պաշտօնավարել. Թեսաղոնի-
 կէ քսոցորուեցաւ և հոն վախճանեցաւ 62
 տարեկան, 1777ին Սեպտեմբեր 6ին:

Իր գրաւոր և տպագրեալ երկերն են. Բա-
 նագիրք աշխարհաբանէ գրաբան, 1836ին
 տպուած. Գրքոյի աղօթից, կոկիկ և առանց
 լատինարանութեան տպուած գրաբար առա-
 ջին զիրքն է. Ընդդիմադրոչիւն մոլորական
 գրուածոց Սրմաքէշ Մանուէլի (ձեւագիր)
 և Եկեղեցական Մատեանք Հայոց, սքանչելի
 գիրք և հեղինակութիւն մը, զոր իբր առաջ-
 նորդ ունենալով, Հ. Գարբիէլ Աւետիքեան
 հեղինակած է իր Սրբագրոչիւնք Շարակա-
 նաց և այլն, ընտիր գիրքը: Նմանապէս
 ձթ. Սաղմուսիև Մեկնարաւնոչիւնը գրած է,

որուն վրայէն Հ. Միքայել Չամչեան բովանդակ Սաղմոսաց գիրքը մեկնած է, ընդարձակ և ստուար հատորի մը մէջ:

Հ. Մկրտիչ Անանեան բանաստեղծ առաջին Մխիթարեանն եղած է, որուն երկու ընտիր և քիչիկ մը խրթին քերթուածիկները կարելի է գտնել Հայկազնեան բազմաքերթին մէջ. Մխիթար Աբրահամ որոտանաւոր տապալանագրին հեղինակն ալ ինքն է:

— Այս երկուքէն վերջ յիշատակութեան արժանի են Հ. Իզնատիոս Խաչատուրեան և Հ. Ղուկաս Օղոշըշիսեան Վարդապետները:

Հ. Իզնատիոս 72 տարեկան վախճանած է 1780ին. իր գլխաւոր երկասիրութիւններն են.

ա. Բառագիրք յատուկ սնունդի արտաքին Ս. Գրոց եղեղոց ի գիրս Հայոց.

բ. Յայնսառչոյր Հայոց ոչոյրագրեալ և համառոտեալ.

գ. Պատմութիւն Հիւսիսեան և Կոր կտակարանաց, հանդերձ ընդարձակ ժամանակագրութեամբ:

— Անտիպ և ձեռագիր է իր Պատմութիւն Հայոց, որմէ Չամչեան Հ. Միքայել մեծապէս օգտուած և լոսարանուած է:

Հ. Օղոշըշիսեան, Տրապիզոնցի, որ արդէն իր տկար կազմուածքին համար Վենետիկէն Պոլիս խրկուած էր, աշխարհիկ քահանայ մըն էր և գրեթէ յիսնամեայ, երբ կրկին անդամակցեցաւ Մխիթարայ Միարանութեան: Այս յառաջացեալ տարիքէն վերջ

սկսաւ աշխատիլ և հրատարակեց Նառնդոնրեան Գիրքը: Իր համբաւը սակայն տարածուեցաւ երբ Հայերէն, Պարսկերէն և Արաբերէն Գերականութիւններէն վերջ, հրատարակութեամբ լոյս տեսան իր բազմաքերթները: Այս, Արարերէն — Պարսկերէն — Տաճկերէն — և Հայերէն բառագիրքներն իր արեւելագետի համբաւը նուիրագործեցին:

— Մխիթարայ ձեռնասուն աշակերտաց մէջ սակայն նշանաւորագոյնն ու ամենէն գիտնականն է Հ. Վրթակես, Վրդպ. Ասկերեան, Պոլսեցին:

Սարգիս Աղան ուղղակի գայն դրկեց Մխիթար Աբրահամ ի Վենետիկ, որուն քովէն 19 տարի շարունակաբար, — 1730էն մինչև 1749, — չի հեռացաւ. «եղև նևս որդի ծերոշքեան, կը գրէ Հ. Մազաք — Թէոփիլեանց, իրրև գայլ ոմն Բեկիաւիկն»:

— Ասկերեան Վարդապետ իր ժամանակին ամենէն ուսումնական և ամենէն աւելի համբաւ հանած Մխիթարեանն եղած է. կատարելապէս տեղեակ լատին և յոյն մայր լեզուաց, քաջ հայկարան և գիտուն միտք, մեծապէս նպաստած է տոհմային զրականութեան. ինքն եղած է Գարագաշեան Հ. Մատթէին հետ իր ժամանակի Հայերէն լեզուի անկերպարան և անքերական ոճին դէմ յաջողաբար մաքառողը:

Կրօնական — փիլիսոփայական և հայկա-



Հ. Վ. Ասկերեան

կան ուսմանց մէջ Հ. Վրթանէս մեծ գեր խաղացած է և զգալապէս դիւրացուցած՝ իր աշակերտներուն ընթանալիք ուղին:

Իր երկասիրութիւններն են

- ա. Ընթացք իմաստասիրութեան¹, 4 Հատոր, 1750ին տպուած.
- բ. Խրատք կրօնաշրակսն կատարեղուսեան, 1779ին.
- գ. Քարոզգիրք եօթնկարգեան, 1781ին,
- դ. Բարոյական իմաստասիրութիւն թեւաւարուի.
- ե. Խոկունք ըրիստոնեականք. Հայերէն տպագրութիւնը լոյս տեսած է 1871ին, իսկ տաճկերէնը 1727ին.
- զ. Պատմութիւն Ռօթեի:

Բազդատած է նաև Հայերէն Ս. Գիրքը լատինական Vulgataի կամ Եօթնասնից բնագրին հետ: Եօթն տարի շարունակաբար այս գործին աշխատած է և ասոր հետևանք աշխատասիրած՝ լատին և Հայ Ս. Գրոց մէջ գործածուած բաներուն բացատրողական բանագիրքն, որ թէև անտիպ մնաց, բայց և այնպէս «Թերևս ոչ գտաւ այլ որ և ոչ ևս

1. Կովչնոյ լատին իմաստասէրին հրատարակած երկասիրութեան թարգմանութիւնն է, որ «վսեմ է և դեղափայլ քան զհիւսուած լատին բնագրին»:

գոցի արդեօր» կը հաւատէ ժամանակակից կենսագիրը Հ. Մաղաք-Թէոփիլեանց:

Բաց ասոնցմէ, անտիպ ձեռագիր աշխատ- սիրութիւններ ձգած է, որոց մէջ ամենէն աւելի նշանաւոր երկասիրութիւնն է իր «Մատենի Հայ եկեղեցական պաշտամանց միելե յե. Գար»:

Սփերեան Հօր համբաւն և իր հետզհետէ հրատարակած երկասիրութիւններն այն աս- տիճան մեծ ընդունելութիւն գտած էին Ազ- գին մէջ որ Հ. Մաղաք կը գրէ. «Ի հան- դիտանալն տպագրութեան թարգմանութեանց նորա, տարածեցաւ գոյութեամբ անուն նո- րա և համբաւ իմաստութեանն յազգիս մե- րում. մինչև յաշխարհն Հնդկաց և Պարսից առ ազգայինս մեր, բնակեալս յայնոսիկ աշխարհս, յորս Չուղայեցիքն տային նմա դանուն՝ Մեծագոյնս Վրբակես Վարդապետ. և արդար և մարթ է ասել թէ վարդապետս այս իւրօք թարգմանութեամբք ետ դարձ առնել ոսկեղէն նախնի դարուն թարգման- շացն մերոց Սահակայ և Մեսրոպայ և իւ- րեանց ձեռնասուն աշակերտաց»:

Բանասէր և լեզուագէտ վարդապետի մա- ճը անզի ունեցած է 1810ին. խոր ձերու- թեան հասած էր - 90 տարեկան: Սփերեան Վարդապետ աշխատել է ուսումնասիրելէ բնաւ չի դադրեցաւ: Մահուան անկողնոյ մէջ անգամ գրելը ձեռքէ չի թողուց: Գրել է ձեռին աւանդեց իր քննասէր հոգին:

«Մխիթար Վարդապետ և իր աշակերտք թէպէտև մեծ ջանքով և եռանդեամբ աշխա- տեր էին իրենց գործոյն կատարելութեանն և ամբողջութեան, բայց չ'էին կրնար չի տեսնել անոր անկատարութիւններն ալ, որ աւելի ժամանակին և իրենց գտնուած դիր- քին հետեանքն էին. ուստի թէ գրով խօստա- ցեր էին Ազգին և թէ բերնով ալ աւանդեր էին իրենց յետագայիցն՝ անոր աւելի կա- տարելութեանը հետամուտ ըլլալ»¹:

Այս աւանդութեան ու գրութեան հաւա- տարիմ մնաց Մխիթարայ անգրանիկ աշա- կերտներուն հասունցած սերունդը: Թէև կա- րելի չ'է ուրանալ Սերաստացի վարդապե- տին և իր աշակերտներուն կատարած գոր- ծին մեծութիւնն ու օգտակարութիւնը, ու- րով մայրենի լեզուն կոկեցին, մաքրեցին և զարգացուցին, բայց և այնպէս ասոնց ձե- ոօք գոյութիւն առած լեզուական վիճակը կատարեալ չ'էր կրնար նկատուիլ և ոչ ալ տեական ըլլալ, և թէ որ երկրորդ սերունդ մ'իր նախորդը չի գերազանցեր: Այսպէս Մխիթարայ և իր աշակերտներուն շինած կամ յօրինած Գերականութիւններն ու բառա- րաններն անկատար էին և չ'էին համապա- տասխաներ ժամանակի պահանջումներուն:

1. Տես Մատենագրութիւն Հ. Գ. Վ. Զարբ- հանալեանի. Երես 419:

1779ին Հ. Միքայել Չամչեան տեսնելով թէ նոր ձեռագիրներու գիւտն և հայերէն լեզուի հետզհետէ ստացած զարգացումն այլ ևս չ'էին կրնար դո՛չ մնալ Մխիթար Աբբահօր Քերականութենէն, սկսաւ յօրինել իր նշանաւոր Քերականութիւնը: Գրեթէ 40 — 50 տարի վերջ այս Քերականութիւնն ալ կը հիննար, որով 1815ին Հ. Աւետիքեան Գարբրիէլ Վարդապետ կը ստիպուէր աւելի հմուտ կարգաբանութեամբ, աւելի ճոխ պարունակութեամբ և աւելի քննադատ ոգիով ընդարձակ Քերականութիւն մը հրատարակ հանել:

Ճիշտ այս միջոցին երեք բազմալատտակ և բազմահմուտ Վարդապետներ (Աւետիքեան, Սիշրմեղեան և Մկրտիչ Ազգերեան) կը սկսէին աշխատիլ Հայկազնեան մեծ և լիակատար բառգրքի մը յօրինուածութեան: 1784ին սկսան այս ամէնադժուարին գործը, և հազիւ կրցին զայն 1834ին աւարտել, ամբողջ 50 տարուան շրջան մը բոլորելով և ջանալով որ լեզուի ճոխութիւններէն բան մը դուրս չի թողուն և ամէն մէկ բառին ճիշտ նշանակութիւնը գտնեն: Այս նպատակաւ հին Չեռագիրներն ու թարգմանութիւնները յունական բնագիրներու հետ մի առ մի բաղդատեցին և յոյն հումանիշ բառերուն հետ լատինականներն ալ դրին: 1838ին հրատարակուած է այս գլուխ — գործոց հսկայ գործն, որ մի անգամ ընդ միշտ սո՛հմային լեզուն կորստեան և աղաւաղութեան վտանգէն փրկուեց:

Կեց: Հետևաբար եթէ հայ լեզուն ու գրականութիւնը իր վերակոյտանակ ծնունդը և մակնորքիւնը կը պարտի Մխիթար վարդապետին և իր աւգի Աշակերտներուն, իր հետզհետէ առած հսկայ քաջերն ալ կը պարտի Սիշրմեղեանի, Ագոնց Գիւլիէի, Չամչեան Միքայելի, Աւետիքեանի, Չախչախեանի, Մկրտիչ Ազգերեանի, Ինճիճեանի և Սոսոյեանի, որոնց գրական գործունէութիւնն երկարած է՝ ոմանցը մինչև 1800ին առաջին քառորդը և այլոցը՝ մինչև կիսուն:

50 տարուան ժամանակամիջոցի մէջ (1800էն մինչև 1850), այս երկրորդ սերունդը պատմական-լեզուական և գիտական շարքան մը բոլորեց, ուսմանց և գիտութեանց շողովրդական համայնք մը տալով, որով և ժրականապէս գոռո Մխիթարեան գրականութիւն մը ստեղծեց:

* * *

1800ին սկիզբները Մխիթարեան Հարց գործունէութիւնն ու ուսումնականութիւնը մտրակող անձնաւորութիւնն եղած է Հ. Սոսոյեանու Ագոնց Գիւլիէն, որուն Միարանութեան ներշնչած յառաջդիմական ուղղութիւնն աշխուժով յառաջ տարուած է Սոսոյեան Արքեպիսկոպոսին օրով: Ագոնց Գիւլիէն, որ Մխիթար Աբբահօր

երրորդ Յաջորդն է, Առտէալի Հայ Գաղթականներէն էր և ծնած՝ 1740ին Թրանսիլվանիոյ Ճուճօլ քաղաքը:

Կիրթ, հանճարեղ և գերմանական լուրջ ու հաստատուն կրթութեամբ օժտուած միտք մըն է Ագոնց, որուն Ս. Ղազար մուտքն ստուգիւ բարեբախտութիւն մը կրնայ նկատուիլ: Քահանայ ձեռնադրուելէն վերջ, շաբունակաբար տասն երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարած է Մայր Վանուց մէջ և այս բարեպատեհ առթիւ բարեփոխած՝ Մխիթար Աբրահօր դասաւանդութեան և կրթութեան հին դրութիւնը:¹

Ագոնց Գիւլէն Մելգոնեան Աբրահօր մահունէն վերջ Միաբանից միաձայն հաւանութեամբն ու բացարձակ քուէիւքն ընտրուեցաւ Աբրայ 1800ին. իր պաշտօնավարութեան օրով Միաբանութիւնը յատուկ Տպարան մ'ունեցաւ: Ինքն միանգամայն եղած է անգրանիկ Մխիթարեան Եպիսկոպոսն, որուն պարագաները պիտի ուրուագծենք ուսումնասիրութեանս վերջն, երբ եկող զացող Աբրաններուն առաջնորդութեան արգիւնքը համառօտ պատմագրենք:

1. «Ոչ շատացեալ նորա մատուցուել նոցա զհօգևորն, փութայր նշանաւորս գործել զնստա և յուսմունս իմաստից, զիտելով հաւատեալ թէ քանի կարևոր էցէ այն յազգին մերում»: Տես Կենսագրութիւն Երևելի Աբրանց. Երես 312:

Իր տպագրեալ երկերն են

ա. Ճարտասանոչիւն Հայկազնեան լեզուի, 1775ին հրատարակուած. այն ատեն մեծ ընդունելութիւն գտաւ այս ճարտասանութիւնն, որուն գրաբառ լեզուն ու ոճը մանաւանդ պարզ, սահուն, զարդարուն և գրաւիչ է: Իր զլուխ գործոցը սակայն է բ. Բեդհակոչ Սխարհագրոչիւն, որուն հրատարակութիւնը 1802ին սկսած և 1816ին հազիւ աւարտած է: Մանրակրկիտ և երկար հետազոտութիւններու ծնունդ է այս աշխատասիրութիւնս, որ երկու անգամ ի գիր առնուած կամ խմբագրուած է, «վասն արկածին հրայրեցին զիպելոյ քանի մը հատորոց պատուական մատենիս սկզբնագիծ ձեռագրի սորա ի Կ. Պոլիս, ուր առաքեալ էր նա՛ առ ի անվրէպ քննութիւն ստուգութեան գրելոց իւրոց զԱսիական աշխարհացն, Պարսից և Արաբացոց»: Այս երկու երկասիրութիւններէս զատ, գրած է նաև

գ. Պատմոչիւն Վարոց Մխիթարայ, 1810իև.

դ. Ներածոչիւն առ աշխարհագրոչիւն. 1814իև

ե. Մեկնոչիւն Պատմոչիւն Ս. Գրոց, 1819իև:

— 84 տարեկան և 1824ին Յունուար ամսոյ 23ին վախճանած է:

Ագոնց Աբրահօր ժամանակակից է Հ. Միքայել Չաւէեան Պոլսեցին, որ 1738ին ծնած,

արուեստիւ ոսկերիչ էր և սիրելի՝ Տիւզեան
Մեքայէլ Չէլէպիին, որ ի զուր ջանաց զինքն
իրեն փեսայացնել: 23 տարեկան էր Մել-
թարեանց վանքը մտած ժամանակ, ուր ար-
դէն կը գտնուէր իր երէց եղբայր, Հ. Յա-
կոբոս¹:

Հ. Մեքայէլ իր երիտասարդութեանը գրա-
կանութենէն հետի սպրած է. իր կարգա-
կեցներէն ո՛չ ոք կը գուշակէր թէ այն պինդ
պահպանողական և խիստ կրօնասէր գանկին
ներքև ծածկուած ըլլայ պատմական և քե-
րական հանճար մը: Միակ յատկութիւնը
զոր գիտէին, անոր սքանչելի բեմասաց և
պատրաստարան մէկ ըլլալն էր. այս պատճա-

1. Չամչեան Յակոբոս վարդապետ հոգեւեր
անձ մըն էր և յաջողակ՝ չափագիտական ուս-
մանց մէջ, առաջին անգամ ինքն յօրինած է
Օրացոյցը, որուն անդրանիկ տպագրութիւնը
1787ին եղած է: Հ. Յակոբոս իր շինած օրա-
ցոյցին մէջ իւրաքանչիւր օրուան հանդէսը
Հայ, Յայն, Լատին, Տաճիկ և Հրեայ աւուր
պատշաճները զրած է. այս օրացոյցը մեր յի-
շած թուականէն մինչև այսօր ամենայն կանո-
նաւորութեամբ տարուէ տարի կը հրատարա-
կուի և ելած է «Գաղափար օրացոյցից
տպելոց և այլոք յագգիև մերոսմ»:
Հ. Յա-
կոբոս լսոր ծերութեան մէջ – 84 տարեկան –
վախճանած է 1805ին և թաղուած «Ի գերեզ-
մանաստունն Բերայի ի հողն տանն Չամչեանց
հանդերձ տապանագրաւ»: Տես Վարդ. Երևելի
Արանց, Երես 607:



Հ. Միրսյեղ Չամչեանց:

ուս Մեղզոնեան Աբբան զինքն Հալէպ, Պարա և Պաղտատ կը զրկէր իբր քարոզիչ¹: Իր այցելած մէն մի քաղաքին մէջ Հ. Միքայէլ քաղցրախօս և ներկուռ Քարոզչի համբաւ ձգեց. այս համբաւը սակայն և իր Պարա գտնուած միջոցին Նալեան Յակոբ Պատրիարքին դէմ հրատարակած ընդդիմախօսական գրութիւնը բաւական պատճառներ համարուեցան զինքն ստիպելու՝ որ նորէն Վենետիկ իր վանքն դառնայ:

Հ. Միքայէլ երկրորդ անգամ Ս. Ղազար քաջուելուն բոլորովին փոխուեցաւ և քիչ ատենէն հրատարակեց իր հայերէն լեզուի Քերականութիւնն և այս՝ «այնպիսի կարգաւորեալ և դիւրընկալ ոճով, միևնուեւն հաւորեկ Ազգիկն ընդունելի լինել արևելայն իրօք և եգիտ յաջողոյթիակ մեծ ի վաճառ»:

Քերականութեանս առաջին տպագրութիւնն եղած է 1779ին. 1801 և 1803 տարիներուն կրկին տպագրութիւններու արժանացած է:

1. Իբր այցելու դացած է նաև Լիբանան և Իջևանած՝ կաթողիկոսանիստ վանքը: Ժամանակին կաթողիկոսը մեծ համարում և վստահութիւն կը տածէր Հ. Միքայէլին վրայ. գուցէ այս էր պատճառն որ Հ. Միքայէլ երկար պատմական յիշատագրով կ'առաջարկէր Լիբանանու և Ս. Ղազարու ի մի ձուլումը: Այս գաղափարն իրականութիւն գտած չ'է. Հ. Միքայէլը յիշատակագրին համար կ'ըսուի թէ Լիբանան կը գտնուի կաթողիկոսական հին Դիւանատան մէջ:

Այս նոյն ժամանակուան համար կատարեալ համարուող Քերականութիւնը մէկէ աւելի սերունդներու դասագրքի տեղ ծառայած և Եւզլի ու Տիգրիսի մէջ երիցս անգամամուլոյ ներքև դրուած է:

Հ. Միքայէլի համբաւը սակայն իր ամենէն բարձր զէնթիւն հասաւ, երբ հրատարակեց իր Հայոց Պատմութիւնը պարզ և գեղեցիկ կարգաբաւերաբար, հսկայեղ մանրաշոյջ ծանօթութեամբ և անվրէպ ժամանակագրութեամբ, միջարևոյս լեալ յամենայն մատենագիրս Յոշևաց և Լատինացոց և Ատրշոց»: Համառօտն ալ տպուած է 1815ին, ինչպէս նաև Տաճկերէն լեզուի ալ թարգմանուած է:

Պատմական — քննադատական երկասիրութիւն մըն ալ հեղինակած է Յովհաննէս Օձնեցի իմաստասերին վրայ: Այս գրութեամբ Չամչեան Վարդապետ հիմնական և հնախօսական ու հայրախօսական փաստերով ցուցուց թէ Օձնեցիին Մարգեղութեան ձառը տիրապէս ուղիղ և համաձայն է կարողիկ վարդապետութեան¹:

1. Պապիկեան Հ. Աստուածատուր, Վիեննական Մխիթարեանց առաջին Աբբա՛հայրն ու Հիմնադիրը, հակառակորդ մըն էր Օձնեցիին, իր այս մտօք հրատարակած գրքին հետևանօքն էր որ Չամչեան գրեց իր պաշտպանողական մեկնաբանութիւնը. Կնդիրը մինչև Հռոմ գնաց, երկուքին ալ զիրքերը լատիներէնի թարգմանուեցան. Չամչեան յալթութեան դափնին շահեցաւ:

Նշանաւոր և հմտալից է իր Մեկնոչքիւն Պաղնասցը. ճօխ, լիակատար և բազմադիմի հմտութեամբ լի աշխատօիրութիւն մըն է այս մեկնողական գիրքն, որուն ամենէն մեծ առաւելութիւնն է Հայ Եկեղեցւոյ սրբազան Հայրապետներուն և Գրիչներուն վկայութիւնները: Կը հաւաստուի թէ յատկապէս այս մեկնութեան համար 1795ին Պօլիս ճամբորդած և հոն երկար և քրտնալից աւելակցութիւններ ու բանակցութիւններ ունեցած ըլլայ Հրեայ բարունիներուն հետ:

Իր այս ծանրածանր զբաղմանց միջոցին ժամանակ գտած է նաև գրելու հոգևորական զրբեր. այսպէս

Պատկեր Տօնից

Նազազարան Օրհնոչքեանց


Հրահանգ Եօրնեկի

Սեղան խնկոց:

86 տարեկան և 1823ին վախճանած է Պօլսոյ մէջ: Թաղուած է Բերայի Գերեզմանատունը. իր տապանաքարը դեռ ասկէց տասնեակ տարիներ առաջ կարելի էր գտնել:

18րորդ դարուն առջի քառորդին լեզուագէտ և բանաստեղծ Մխիթարեաններուն պարզուիւն է Հ. Մանուէլ վրդպ. Չախլախեան:

Բնիկ Կիւմիւշխանեցի էր և մայրն՝ աղնուատոհմ՝ յոյն Անդրոնիկեան սերէն. 1782ին վանք մտած է և իր կենաց մեծագոյն մասն անցուցած՝ Ս. Ղազար: Բնախօսական և



Հ. Մանուէլ Չախլախ:

չափագիտական ուսմանց մէջ թէև մասնագէտի համբաւ ունէր, բայց «յաւէտ քան զամենայն» Հայկարան էր:

Հատիներըն, Իտալերէն, Յունարէն, Ֆրանսերէն և գերմաներէն լեզուներուն կատարելապէս տիրացած էր, որով իր ամէն տեսակ երկասիրութիւնները միջազգային ծանօթութիւններով և վկայութիւններով խնդրուած են:

Արձակ և ոտանաւոր գրութիւններ թողած է: «Քիչ են իր անունը կրող տաղերը, կը գրէ Հ. Գար. Զարբհանալեան իր Նոր Մատենագրութեան մէջ, բայց ամէն ալ բարձր հանճար մը կը հռչակեն»: Իր տաղերն և ընտիր թատերախաղերը, իր քերթողի հանճարն ու մանաւանդ իր գրաբաւ սահուն լեզուն յիշատակելի են:

Իր գրութիւններէն նշանաւոր է Իտալերէն, Հայերէն և Տաճկերէն բառարանն, որ երկու անգամ տպագրուած է. 1804ին և 1829ին: Նմանապէս իր «Հայերէնէ Իտալերէն» բառգիրքը կրկին անգամ, որ է 1834ին և 1837ին տպագրութեան պատուոյն արժանացաւ: Թարգմանած է Կէսնէո Գերմանացիին Արելի ֆերրուածները, 1825ին լոյս տեսած, և լատին հեղինակ Հօշիուսի ողբերգութիւնները 1830ին: — Անտիպ մնացած են իր թարգմանած Ալթիէսին Երկրաչափութիւնը և Գրահաշիւը:

1835 տարւոյ յունուար ամսոյն Յին վախճանած է 65 տարեկան, միօրեայ հիւանձ



Հ. Գարբ. Աւետիքեան

գութենէ մը վերջ, արդիւնք՝ իր գիշերն ի բուն աշխատելուն:

Մխիթարեանց ամենէն նշանաւոր և ուսումնական անձերուն մէջ իրաւցընէ մեծ Դէմք մըն է Աշտիքեան Հ. Գարիէլ Պոսեցին, որ 1750ին ծնած է:

Իր ծնողաց մէկ ուխտին հետեանօք Վենետիկ զրկուեցաւ, ուր արդէն տակաւին տասնամեայ՝ մատնանիշ ընել տուաւ իր արտակարգ հանճարն ու ուսմանց ունեցած բնական սէրը:

Իր կեանքը միօրինակարար Մայր վանուց մէջ անցուցած է և հոն վախճանած՝ 77 տարեկան, 1827ին:

Ժամանակակից Գրոնիկագիրը՝ Հ. Մաղաք-Թէփիլեանց՝ մեծ գովեստիւք մատնանիշ կ'ընէ Աւետիքեան Հօր արժանիքն ու գրական եռուզեռ ժիր և անվճատ գործունէութիւնը. « Էր զգաստ և արքունի մտօք. խաղաղախո, քաղցրաբարոյ, հանդարտաւիտ և անշտապ յազդոյրքիւն իշր »:

Խորունկ աստուածաբան միտք մըն էր Աւետիքեան Հայրը, որուն գրութիւններէն յիշատակելի են

Մեկնոյթիւն քրոյց Պաշտօնի
Բացատրոյթիւն Շարակնաց
Ճաս քոյակնս Հոգոյն Սրբոյ
Լուծումն Գրոյց Նարեկացիի
Քերականոյթիւն Հայկազնեան յեզոյի
Մտածոյթիւնք և ձաք Ռոտրիկիկի
Յաղագս Քաղաքիւն Աստուծոյ:

Իտալերէն լեզուաւ տպուած են

Համառօտ Քերականոյթիւն Հայերէն, Իտալերէն, և Տաճկերէն
Բոյսումն Հոգոյն Սրբոյ
Պատարագաւստոյց Հայոց
Քննադատական տետրոյթիւնք վասն արքագրոյթեանց Հայ. Եկեղեցոյ Գրոյց:

Անտիպ բազմաթիւ աշխատասիրութիւններ ալ թողած է. այսպէս « Իտալերէնէ Հայերէն Քերականոյթիւն, մէկ քանի ճառեր Հռոմայ ճեմարանին մէջ արտասանուած: Պատագովական քննոյթիւն եկեղ. մատենիկ Հայոց (ընդարձակ գործ և բազմահատոր իտալերէն և հայերէն կղեւնս Գալանոս (Իտալերէն). Համառօտ Մեկնոյթիւն Ծննդեան գրքիւն (գաղղիերէն). Ինչպէս նաև բազմաթիւ հատակաօր ճառեր, Քարոզներ և Վատագովական գրուածներ:

Թէ ժամանակակիցք ինչ մեծ գաղափար ունէին Աւետիքեան Հօր վրայ, յայտնի է սա խորհրդածութիւններէն որք գրաբառ լեզուաւ գրուած՝ Ս. Ղազարու Դիւաններուն մէջ պահուած են, գործնք ընդօրինակած եմ վարք Երեւելի Արանց Հեղինակէն. « Ի գրուածըս սորա փայլին խորին հմտութիւնք, հզօր պատճառաբանութիւնք, որչամիտ վարդապետութիւն յամենայնի. իսկ ըստ շարաւ

դրութեանն է վսեմ և ընտիր հայկաբան, քաջ հետևող գրաւոր երկասիրութեանց ազգային բանասիրաց մերոց՝ ծաղկելոց ի հինգերորդ Գարուն, որ համարի Ոսկեղէն Գար Հայկական Գպրութեան»:

— Գիտուն և նշանաւոր հնախօս Դեմք մըն է նաև Հ. Դոշիս Ինձիճեան:

Պոլսեցի միջնակարգ ընտանիքի շառաւիղ մըն էր Հ. Ինձիճեան և 12 տարեկան՝ երբ Ս. Ղազարու վանուց սեմէն ներս մտաւ, ուր արդէն կը գտնուէին իր երկու քեռորդիները՝ Չամչեան Յակոբոս և Միգայէլ հարազտաբ:

Քերթող, հնասեր և խուզարկու միտք մ'եղաւ Ինձիճեան վարդապետն, որ կրնայ ամենայն իրաւամբ Հայր հայկական Հնախօսութեան յորջորջուիլ:

Բանաստեղծական աւիւնով առլցեալ, սքանչելի կերպիւ երգած է Վասփորի գեղածիժաղ ափունքն իր Բիւզանդեան Ամաւանոցովն, ուր հնախօսի մանրազնին խուզարկութեան հետ յազոզաբար լծորդած է քերթողական արուեստը:

Անարանց Բիւզանդեանն, որուն յառաջարանն արդէն ինքնին հնախօսական սքանչելիք մըն է, ոտանաւոր նկարագրութիւնն է Պոլսոյ Նեղուցին և Գիւղերուն. 1794ին տպուած է և իտալերէնի ու Գրանսերէնի թարգմանուած 1833ին:

Իր Գլուխ Գործոցը սակայն Աշխարհագրութեան և Հնախօսութեան գիրքերն են, որոնք

բազմահմուտ, քաջ կշռող և լեզուագէտ հանճար մը կը մատնանշեն: Գրած է նաև Ուղևորութիւնը Հայաստանի, զոր տասն երկար տարիներու մէջ աւարտած է և յաջող արդիւնքը կրնայ նկատուիլ իր բազմավաստակ ճգանց և համբերատար հաւաքումներուն: Նմանապէս Օսմանեան Պետութեան աշխարհագրութիւնն ալ աշխատասիրած է, զոր պատրաստելու համար անձամբ Պոլիս եկած և միևնաձէն թուրք երևելի աշխարհագետին հետ երկու երեք տարիներ միասին աշխատած է: Ասոնցմէ զատ իր գրական միւս աշխատասիրութիւններն են

Դարապատուով

Համառօտ Աշխարհագրութիւն

Վարդ Երևելի Արսևց

Երևանի Բիւզանդեան

Ներածութիւն:

Ինձիճեան Հօր գրուածքներուն մէջ ընտիր դասաւորութիւն կը տեսնուի, ինչպէս նաև հաստատամիտ դասաստան և խոհականութիւն: Իր հայերէն լեզուն ալ ընտիր է և ոճը՝ զարդարուն: Հնախօս վարդապետիս անունն այն ժամանակ Երոպայի մէջ ալ մեծ հռչակ հանած էր, այնպէս որ Սէն Մաթէն մինչև անգամ կը յայտարարէր իր մէկ կարևոր գրութեանը մէջ թէ, «le Père Luc Ingigian est l'un des plus habiles, des plus savants et des plus la-

borieux Membres de la Congrégation Arménienne, établie dans l'île de St. Lazare» :

75 տարեկան էր երբ 1833ին վախճանեցաւ այս Հնախօս Մխիթարեան կրօնաւորն, որ «ի գիտութեան մասին եղև մին յանուանի վարդապետաց Ռ.խտիս մերոյ և Ազգին և որ ի կենակցութիւնս էր զուարճախօս և քաղցրաբան, հանդարտ ի ճառելն ձայնիւ բարբառով և կարգաւորեալ, որ և ըստ կերպարանացն էր արգոյ և պատկառելի, որով ձգեցան ի սէր սորա և ի մեծարանս, որք մի անգամ կենակից եղին ընդ սմա (1)» :

* * *

Տոհմային լեզուն վերակենդանացնելէն վերջ, անհրաժեշտ պարտաւորութիւն մըն էր անոր մոռցուած և թաղուած ձեռագիր զանձերն ալ գտնել : Գրականութիւնը, տարակոյս չի կայ, չէր կրնար առանց այս ձեռագիրներուն յարատև կեանք մ'ունենալ : Փիլիսոփայական, կրօնական մեկնողական, արուեստաբանական, հնախօսական շահեկան ձեռագիրներ կային հոս ու հոն. ժամանակն եկած էր ուրեմն զասոնք փնտռելու, գտնելու

1. Տես կենսագրութիւն Երեմի Արանց. Երև 685 :

և հաւաքելու, « ո՛չ միայն հնութեան և տգիտութեան յամենաձախ ժանեաց թափելու համար կամ անօգուտ ճոխութեան մը լոկ աւանդապաշ ըլլալու դիտմամբ, այլ զանոնք տպագրութեամբ հրատարակելու և Ազգին մէջ անոնց ընթերցումն ընդհանրացնելու նպատակաւ » (1) :

Հնութեան սիրահար և խուզարկու Միտք մը պէտք էր այս մեծ և դժուարին գործին, Մարդ մը՝ համբերող և յարատև : Այս Միտքը ու Մարդն եղաւ Մխիթարայ չորրորդ Յաջորդը, Հ. Սոսթիսա Վրդպ. Սոսեյեան, Պոսեյեան :

Գործունեայ, անվհատ և հնասէր Միաբան մըն էր Սոմալեան Հայրը. կիրթ ճաշակի տէր, լեզուագէտ և եւրոպական կեանքի հետ շփուած, իր պաշտօնավարութիւնն օգտակար եղաւ Միաբանութեան : 1824ին յաջորդելով հանգուցեալ Ազոնց Գիւլէո Արքեպիսկոպոս Աբբային, ծաղկեալ և յաջող առաջնորդութիւն մ'ըրաւ և կրցաւ իր Միաբաններուն աստուածաբանական եռանդին ու կրօնական ուղղութեան և ուսման առաջնորդել :

Ամէն բանէ առաջ իրեններուն զուտ տոհմային կրթութիւնը բաւական չհամարելով, հետզհետէ սկսաւ զանոնք եւրոպական դաստիարակներուն ընտելացնել : Իր օրովն էր որ օտար լեզուաց ուսուցումը մուտ գործեց Ս.

1. Տես Նոր Մատենագրութիւն. Երես 557 :

Ղազար: Իր 22 տարուան արբայութեան օրով աւելի աջակցած և նպաստած է այն Միաբան վարդապետներուն, որոնք աւելի եւրոպական գրականութեան սիրահար, եւ կած հասած կը կարծէին ժամանակն եւրոպական մատենագրութեան ու գրականութեան ճաշակը ծանօթացնելու կամ ներշնչելու Ազգին: Իր ժամանակի Սերունդին գրական գործունէութիւնն եղած է Պատմական — Գիտական—Էզոռական:

Սոմալեան Արքեպիսկոպոս իր Արբայ ընտրուելէն քանի մը տարի վերջ ընտիր և յաջողակ ոյժերու խումբ մը բոլորեց իր շուրջ. ասոնց շնորհիւ կրցաւ գտնել տալ և հաւաքել՝ Մայր Վանուց մէջ՝ Նախնեաց ձեռագիրները: Թարգմանութիւնները բնագիրներուն հետ բաղդատել տուած է և յաճախ՝ հարկաւոր պատմական մեկնութիւններով, հմուտ ծանօթութիւններով և հնախօսական յառաջաբաններով զանոնք հրատարակութեամբ Աղզին ծանօթացուցած է: 50է աւելի ձեռագիրներ իր շնորհիւ լոյս տեսած են. ինքն անձամբ եղած հրատարակութիւնները քննութեամբ նորէն աչքէ կ'անցընէր. կը հաւաստուի թէ ամիսներ և տարիներ դրած է բաղդատելու համար ասոնք ձեռագրաց հետ. այս մասին իրեն գլխաւոր աշակիցն ու թեթիւ կունքն եղած է Հ. Ներսէս վրդպ. Սարգիսեան, Տրապիզոնցին. որ իր բովանդակ կեանքն ու մտաւորական պաշարը նուիրեց այս շոր ու ցամաք գործին:

Չեռագրաց տպագրութեան գործն ալ յաջողցնելու համար, այս գործօն Արբան Տպարանին մեծ զարկ և մղում տուաւ, փոխելով փայտաչէն հին մամուլները և անոնց տեղ դնելով անգիական գեղեցիկ, հաստատուն և ձուլածոյ նոր և ընտիր մամուլներ, յատկապէս դրամագլուխ մըն ալ յատկացուց տպարանին: Տպարանական գործոց մէջ իրեն ալ բազուկն եղած էր Պոլսեցի Սորկոռնեան Հ. Յովնակեան վարդապետ:

Սոանձին և յատուկ դրամագլխով մըն ալ օժտելուցած է իր հիմնած և 1843ին հրատարակել տուած Բազմապէպ Հանդիսարանն, որուն կազմակերպութիւնն արդիւնք է Այլազոյսի Հ. Գարրիիին:

Սոմալեան Արբան գրական դէմք մըն ալ եղաւ, առաջին անգամ ինքն փորձած է ծանօթացնել Եւրոպացիներուն հայ գրականութիւնը. այս դիտաւորութեամբ 1825ին հրատարակեց իր ցոռակ բարգմանութեանց Նախնեաց Ի Ս. Հարց և յայր Մատենագրաց իտալերէն լեզուաւ երկասիրութիւնը⁽¹⁾, ինչպէս նաև «Նկարագիր Հայ Գպրուորեան», նմանապէս իտալերէն⁽²⁾, որոնք երկար ժամանակ եւրոպացի Գիտոնց և Հայերէնագէտներուն ձեռքի manuelներն եղան: Բաց ի

1. Catalogo delle opere classiche dei SS. Padri e di altri Scrittori, tradotte anticamente in armeno.

2. Quadro della Storia Letteraria d'Armeni.

ատնցմէ 1843ին տպագրութեամբ ի լոյս
ընծայած է Աւերիտերէն - Հայերէն - Տաճկերէն,
Հայ - Աւեր - Տաճկ և Տաճկ - Հայ - Աւեր
բառագրքերը: Գրած է նաև Ներածոչիւն
աշխարհագրոչիւն անուն գիրք մը և Մխի-
թարայ կենսագրութիւնն իտալերէն լեզուաւ:

Իր օրով ծաղկած Հ. Եղիա Թովմաձան:
Հելլենագէտ և հայկաբան քերթող միտք մըն
էր այս Պոլսեցին:

Շահեկան կրնան համարուիլ իր Իրպ-
րոչքիւն նամակացը, որուն գրաբառ լե-
զուն գրաւիչ է և աշխարհարառ օրի-
նակները կարելի է այսօր իսկ օգտակարա-
պէս կարդալ, լեզուաբնական տեսակէտիւ:
Յանգաւոր ոտանաւորի սիրահար մըն էր
նաև, և այս չափաւ ուղղակի լատիներէն
բնագրին վրայէն թարգմանած է Վիդայի
Քրիստոսակներ, որ երկու անգամ տպա-
գրուեցաւ. (1833-1877): Իր նշանաւոր եր-
կասիրութիւնը սակայն Պրոտարքեսայ Չոչ-
գակչիւն է, 6 Հատոր, 1835ին տպագրուած,
որոնց մէջ կը նկարագրէ Յոյն և Հռոմայեցի
զօրավարներուն և ականաւոր անձնաւորու-
թեանց վարքն ու բարքը: Նմանապէս յոյն
բնագրին վրայէն յանգաւոր ոտանաւոր
չափով թարգմանած է Հոմերոսի Եղիակներ,
և հրատարակած 1835ին⁽¹⁾: Ասկերերանի

1. Բագրատունի Հ. Արսէն աւելի ընաեր
հայկաբանութեամբ գեղեցիկ և զարգարուն ու
նով կրկին անգամ թարգմանած է և հրատա-
րակած 1843ին:



Հ. Ե. Թովմաձան:

քաղուածոյ ճառերն ալ յունարեւնէն թարգմանայ է և բնագիրը լուսարանած ընտիր և հմուտ ծանօթութիւններով:

1848 Սեպտեմբեր ամսոյ 22ին վախճանած է:

Պատմագէտ, լեզուաբան և եւրոպական կրթութեամբ օժտեալ միտք մըն էր նաև Հ. Միկաւ վրդայ. Բժշկեան, Տրապիզոնցին:

Հ. Միկաւ այն աստիճան գործնական միաբան մըն էր, որ իր հանրային գործունէութիւնը մեծ բարիք մ'եղած է Միաբանութեան. կը բաւէ կարծեմ միայն սա կէտին ուշ գնել թէ իր աշխատսիրած իմաստասիրական և գիտական երկասիրութիւններուն բոլորն ալ սպառած են: Կատարելապէս գիտակ իր ժամանակուան ոգիին, այնպիսի գրքեր հրապարակ հանած է, որք թէ շուտ վաճառուած և թէ միանգամայն իրենց օգտակար հանգամանքին շնորհիւ հանրութեան մեծ ընդունելութիւն գտած են: Իր գիրքերէն նշանաւոր են Ճեմարան Գիտելեաց, ուր ոտանաւորով հմուտ և ճիշտ տեղեկութիւններ կուտայ ուսումնական զիտելեաց մասին. կրկին տպագրութիւններու արժանացած է այս գիրքը (1815-1818) և հինգ վեց տարուան մէջ սպառած: Ֆրանսերէնէ աշխարհաբար լեզուաւ թարգմանած է Եզովրոսի Առակները, ամէն մէկ առակին ներքև գրառ խրատական ոտանաւոր մ'աւելցընելով. երեք անգամ (1818, 1860 և 1886) տպագրութեան արժանացած է այս գիրքը: Իր



Հ. Մ. Բժշկեան:

Թարգմանութիւնն է նաև Ռուսիեաներ: Գրած է նաև աշխարհաբան Յայտնոսիւն Աստուածագիտութեան, որ կարգաւ տարւոյն 52 կիրակիներուն և մեծ տաղաւարներուն վրայ կը խօսի: Նկարագիր Երևելի Սրանց, աշխարհաբար, ուր նմանապէս պարզ լեզուաւ տղոց համար յատկապէս կը պատմագրէ այբուբենական կարգով Հայ Եկեղեցւոյ Սրբոց, օտար երևելի և ականաւոր Անձնաւորութեանց կեանքը: Մեր մինչև ցարդ թուած գրքերն անշուշտ չէին կրնար Բժշկեան Հօր համբաւը տարածել, եթէ 1830ին հրատարակած չ'ըլլար իր Պատմութիւն Լեւոց գիրքն, ուր պատմագրուած են Լեւոստանի հայ գաղութին սկզբնաւորութիւնը, անցեալն ու ժամանակակից վիճակը: Այս պատմական մեծարժէք և պիտանի գիրքն հիմա ափսոս որ սպառած է և շատ քիչերուն քով միայն կը գտնուի: 1819ին լոյս տեսած է նաև իր Պոնտոսի հիւն Պատմութիւնը և Վարժոսիւն Մանկանցը, հինգ անգամ տպագրուած (1826, 1860, 1873, 1881 և 1888): Բազմաշեղուեան ֆերականութիւն մըն ալ յօրինած է (արարերէն, պարսկերէն, օսմաներէն և թաթարերէն) և նուիրած է Ռուսաց Նիգոլա Կայսեր, ինչպէս նաև Ռոշուերէն շեղուի ֆերականութիւն մը, ձօնուած Աղեքսանդր Ա. Չարին:

Ութնամեաներորդ Դարուն առջի կիտուն վեներտկոյ Միսիթարեան Հարց ամենէն հոյակապ, նշանաշոր և պանծալի դէմքն է Հ. Մկրտիչ վրդպ. Ազգերեան:



Հ. Մ. Ազգերեան:

Գաղատացի էր Հ. Մկրտիչ. 1762ին ծնած և 92 տարեկան վախճանած է 1854ին :

Անխոնջ միտք, բազմաժառայ հնրոտրիւն, ոսկի գրիչ և աստուածաբան Աւգերեան Հ. Մկրտիչ Մխիթար Աբբահօր ամենէն ազնիւ ծնողն է և անշէջ լամբարը Ս. Ղազարու վանուց, որուն արձակած վառ ի վառ և լուսափայլ ձառագայթներն երբեք պիտի չի կարենան աղօտանալ :

Գժուարին է այս անձուկ էջերուն մէջ քննադատական-կենսագրական մը նուիրել այս մեծ վաստակաւոր Գրչին և տոհմային դպրութեանց անխոնջ Մշակին, որուն շատ և շատ բան պարտական է տոհմային Գրականութիւնն ու եկեղեցական Պատմութիւնը, զորոնք մէկէ աւելի բարեպատեհ առիթներու մէջ Եւրոպացոց ծանօթացուցած է : Այսպիսի հանձարի մը համար հատորներ պէտք են :

Աւգերեան Հ. Մկրտիչ ոգի ի բոին, անվեհեր և անպարտելի կամքով Հոռոմայ առջև յաջողութեամբ պաշտապանած է տոհմիկ Եկեղեցոյ Նուիրապետութեան և աւանդութեանց տիրապէս ուղղափառական ըլլալը, բարսեղեան անհեթեթ սրբազրութեանց դէմ հատորաւոր գրքեր և պրակներ գրած է լատիներէն և իտալերէն լեզուներով, այնպէս որ տակաւ Հոռոմ սկսած էր յարգանք և հիացմամբ վարուիլ այս մեծ և ստուգիւ գիտական Վարդապետին հետ :

Իր գրութիւններէն կամ հրատարակու-

թիւններէն յիշենք միայն իր համառօտ կամ առձեռն բարքերը, զբարբառէ աշխարհաբար և տաճկերէն, ուր կրցած է ամփոփել Հայկազնեան բազրբին բոլոր բառերը, որուն կազմակերպութեան և յօրինուածութեան մեծագոյն մասն արդէն իրն էր : 1846ին և 1865ին կրկին անգամ տպագրուած է այս բառգիրքը : Իտալերէնի թարգմանած է լատերոնացիին Ատենարսևոտրիւները . լիակատար բազմահատոր վարք Սրբոց մ'ունի, որուն մէջ հայ Եկեղեցոյ Սուրբերը կը կենսագրէ : Մեծադիր և յայտաւորքի ձեւով ալ տպուած է այս վարք Սրբոցն, որ տասնեակ տարիներու մէջ հացի նման սպառած է և հիմա Վանայ, Մշոյ, Կարնոյ և Սերաստիոյ հայ վանքերուն մէջ միայն կարելի է գտնել : Այն ընդարձակ Վարք Սրբոցին համառօտն ալ հրատարակուած է, երկու հատոր փոքրադիր . առաջին հատորին մէջ գրուած է մայրենի Եկեղեցոյ Սուրբերը, իսկ երկրորդին մէջ Յայտաւորքին մէջ յիշուածները :

« Անխոնջ Միտք և Գրիչ, կը գրէ Հ. Գարեգին Զարբանալեան իր Նոր Մատենազրութեան մէջ, բազմաժառայ աստուածաբանական գիտութիւն ունեցող անձ մը, եռանդուն հոգի և սիրտ մը, որուն նուիրական ուսմանց վերաբերեալ բազմաթիւ երկասիրութեանց մաս մը հրատարակուած է և բազմազոյնք՝ դեռ ևս անտիպ մնացած : Առջիններէն՝ բաւական ըլլայ միայն յիշել լիակատար Վարք Սրբոց 12 հատորներու,

մէջ ամփոփուած. Հետաքնին և բազմատեղեակ ծանօթութեամբ: Իսկ դեռ չի հրատարակուածներէն ընդարձակ Աստուածաբանութիւն մը, 4 Հատոր, Մատենադարան Հարց Եկեղեցւոյն Հայոց, նոյնպէս 4 Հատոր, Արևմտեան Եկեղեցւոյ Հարց ամփոփում մը, 12 Հատոր. իրեն են դարձեալ Եւսեբեայ Քրոնիկոնին, Փիլոնի Աղեքսանդրացւոյն, Սերբիանոսի, Եփրեմի, Օճնեցւոյն ճառից լատին թարգմանութիւնք⁽¹⁾»:

Հ. Մկրտչին կրտսեր Եղբայրն ալ, Հ. Յարութիւն, բաւական օգտակար եղած է տոհմային գրականութեան: Լորտ Պայրընի և ուրիշ բազմաթիւ Եւրոպացի Գիտնոց Հայերէնի ուսուցիչ եղած է: Պավիերայի Լուի թագաւորն ամենէն աւելի գնահատած էր Հ. Յարութիւնն, որուն կանոնաւորապէս ամէն տարի այցելութեան կուգար Ս. Ղազար: Իր ձեռօք իւղաներկ գծագրած է իր ուսուցչին պատկերն ու նուիրած՝ Վանուց: Անգղերէն լեզուաւ Քերականութիւն մը յօրինած է⁽²⁾, ինչպէս նաև Անգղ-Հայերէն և Հայ-Անգղերէն բառգիրք մը⁽³⁾:

Ս. Ղազարու բացառիկ Հանճարներէն և առաջնակարգ պարծանքներէն մին է նաև

1. Տես անդ, Երես 440:

2. Grammar english and armenian.

3. Dictionary english-armenian and armenian-english.



Հ. Յ. Ազգերեսլ:

Բագրատունի Հ. Արսէն Վարդապետ, Պոլսեցին:

1790ին ծնած է և վախճանած՝ 1866ին: 76 տարեկան հասակին մէջ: Բագրատունին վիթխարի հանճար մ'է, և այդ արտակարգ Հանճարին հաւար, արտակարգ կենսագիր պետք է. մեծ հանճար մը չի պատմագրոշիր:

Բագրատունին իր հայկաբանութեամբը գերազանցած է Աւիտիքեանը. բացառիկ է հայկական ուսմանց և քերթողական ճիւղին մէջ:

Իր կեանքն ու էութիւնը բոլորովին նուիրած էր նա տոհմային լեզուին և մատենագրութեան տիրանալու գործին. կը հաւաստուի թէ պարզ այրբնարանէն մինչև նախնեաց ձեռագիր և տպագիր գրքերը կարդացած և ուսումնասիրած է ծայրէ ծայր. չի կար իրեն համար հայերէն տպագիր և ձեռագիր անձանօթ գիրք մը:

1852ին հրատարակած է իր « ի պետս զարգացելոց » հայերէն Քերականութիւնը, արդիւնք իր քառասնամեայ քննութեանց և խուզարկութեանց: Գլուխ գործոց և անուրանալի հոյակապ և իր տեսակին մէջ եզական հեղինակութիւն մըն է այս հմտալից և մասնագէտի միայն վայելուչ Քերականութիւնս, որ իրմէ վերջ եկող գացող Հայկաբաններուն Մենտորն եղաւ: Նոր դասաւանդութեան, նոր ոճի հետեւած է:

Նշանաւոր է նաև իր Տարեդր Հայ-Քերականոչքեան աշխատութիւնն, որուն համար տասնեակ տարիներէ աւելի աշխատած



Հ. Ա. Բագրատունի:

է: Մեծ ընդունելութիւն գտած է նաև իր Տարերք Քերականութիւնն ալ, որուն Գործածութիւնը նոյն ժամանակի Ուսումնական Խորհուրդը պարտաւորիչ ըրաւ բացառաբար ամէն Դպրոցաց մէջ:

Բազրատունին լեզուագէտ ալ էր. հմուտ լատին և յոյն լեզուաց, որոնց երկուքն ալ հաւասարապէս իր մայրենի լեզուին նման դիւրութեամբ կը գրէր և կը խօսէր: Ամբողջ 50 տարի և մինչև իր կենաց վերջին օրը ձեռքէ ձգած չ'է Հոմերոսն. որուն յուներէնը ծայրէ ի ծայր բերնուց գիտէր:

Իր ժողովրդականութեան և մեծ համբաւին զխաւոր պատճառներէն մին ալ իր բանաստեղծի աննման տաղանդն էր, որուն միացած էին եռուզեռ վառվառն երևակալութիւն մը և հիանալի լեզուական ոճ կամ գրելակերպ մ'է: «Անկարելի է կարգաւ Եղերք Սոխակին, Գանդատ Պառնասեայ, Դատաստան Ապոդոնի և չի խոստովանել թէ ատոնք արտագրողը կարգէ դուրս Հանճար մ'է ու նախնի Քերթողաց աշխուժիւն ու եռանդով կրթուած Միտք» կը գրէ Նոր Մարենագրութեան Հեղինակը: — Հայր բանաստեղծութեան և դիւցազներգութեան, Բազրատունին ինքնդինքն գերազանցէ իր «Հայկ» գրքին մէջ: Աքանչելի տաղերու, յանգերու և զրգերու հեղինակ է, որոնց մէջ շատ բան դժբաղդաբար այրած է Պոլսոյ մէջ: Հայկական չափով գրի առնուած ոտանաւորներուն հեղինակն ալ ինքն է, այսպէս

Վիրգիլիոսի Մշակականներն ու Որատեայ Քերքոյականները. Բազրատունի Հօր օրինակին և գիւտին հետևեցան յետոյ ազգային բանաստեղծներէն շատեր:

Միտունի ի կորուստ Դրախտին, Հոմերի իշխականին, Սոփոկլի, Ռաւիլի, Վոյքերի, Ալփիկերայ անգուգական և հրաշալի թարգմանութիւններն ըրած է, ինչպէս նաև Հոնգոնի Փոսկոյեայ Գերեզմանաց քերթուածները: Իր աննման և ձօխ գրաբառին վրայ գաղաբար մ'ունենալու համար կարգալու է թեոփրատեայ Նկարագիրը (1830ին տպագրուած), Յիշատակարանը կեսարոն (1864ին), ձաշակ հիւն և նոր Ողբերգութեանց (1869) ձաշակ հեղին և շատիկ ձարտարախօսութեան (1863) և Մասիյիոնի Քառասներորակալը, և այլն:

Ճրանսերէն լեզուի լիակատար և ընդարձակ Քերականութեան մըն ալ հեղինակ է, ուր վկայութիւն բերուած Ճրանասցի հեղինակներու զուտ գործոցները հայերէն բացատրութիւններով համեմուած են:

Գրիչը ձեռքը, Աստուածաշունչն ու յուներէն Հոմերոսն իր բարձին ներքև վախճանած է Բազրատունին: Եթէ Ս. Ղազար հայ գրականութեան միայն Բազրատունի մը շնորհած ըլլար իր երկգարեան գոյութեան ժամանակամիջոցին մէջ, նորէն իր անունն յաւէտ սիրելի պիտի ըլլար Ազգին և ոսկի գրերով արձանագրուէր հայ դպրութեան մատենին մէջ:

* * *
 1846ին Սոմալեան Աբբան բաղմամեայ արդիւնաշատ պաշտօնավարութենէն վերջ, Մխիթարայ յաջորդելու աւագ պատիւը կը ստանձնէր Հիշրմիւզեան Գեորգ վարդապետ:

Մէկ ու կէս դարու ժամանակամիջոցին մէջ Ս. Ղազար հաստատուած Միարանութիւնը հեռզհեռէ ծաղկեցոյց տոհմային լեզուն, մատենագրութիւնն ու օտար ազգաց գրականութիւնը: Այս գործին մեծ սատարողներն եղան մանաւանդ Ագոնց Գիւվէո և Սոմալեան Աբբեպիսկոպոս Աբբահայրերը: Այս շրջանն անտարակոյս ալ աւելի հսկայ քայլերով պիտի յառաջանար, եթէ անցեալիննետաններորդ դարու երկրորդ կէսէն սկըսեալ զանազան արգելիչ պատճառներ չի գային և չի խանգարէին քիչ մը ժամանակ ձեռք բերուած արդիւնքները:

1846ին Սոմալեան Աբբան բաղմամեայ արդիւնաշատ պաշտօնավարութենէն վերջ, Մխիթարայ յաջորդելու աւագ պատիւը կը ստանձնէր Հիշրմիւզեան Գեորգ վարդապետ:

Այս չորրորդ Աբբան Պոլսեցի մըն էր և կը պատկանէր հայ հռովմէական հին և ազնուական գերդաստանի մը, որ դեռ ցայսօր պահած է իր անդամոց մէջ առտնին առաքինազարդ կենցաղագիտութեան սովորութիւնները (1):

1. Երեք հարիւր տարուան հնութիւն ունեցող գերդաստան մըն է Հիշրմիւզեանց ըն-

Հիշրմիւզ Հ. Գեորգ վարդապետ իր անձին վրայ կենդրոնացուցած էր ազնուական, կիրթ, լեզուագէտ, քաղքենի և աշխարհիկ կեանքի հետ շփուած կրօնաւորի մը տիպը: արտաքին համակրալից երևոյթի մը ներքեւ, սակայն պինդ պահպանողական վանականի, եռանդուն տոհմասէրի և ճշմարիտ Մխիթարեանի մը սկզբունքներն ունէր, որոնց թարեանի մը սկզբունքներն աւելի արկածալից աերեսէն բաւականէն աւելի արկածալից առաջնորդական պաշտօնավարութեան օրերուննեցաւ: Երկար տարիներ Պոլիս պաշտօնավարած ըլլալուն պիտական կղերական և աշխարհական շրջանակներուն մէջ ծանօթ դէմք մըն էր, հայկաբան, լեզուագէտ և

տանիքը: Նախահայրերնին կետարացի մըն է, Անիքսան անուն. 1610ին ծնած և 1660ին վախճանաց: Կը հաւատարմի թէ Ալեքսան Աղա Պոլիս եկող և հաստատուող առաջին կեսաւրացին է: Բուն Հիշրմիւզ մականունը կը սկսի Համի Հիշրմիւզեան, որ Ալեքսան Աղայի որդին է: 1650ին ծնած է Պոլիս և 1729ին վախճանած: Ասոր որդին Աբբահամ, 1885ին ծնած, Ապտուղչաի մականունը ժառանգած է: Ասոր համի որդի միւզեցի կը սերին Ապտուղչաի Աբբահամի որդի Հիշրմիւզ Աղայեան, 1717ին ծնած, որուն Յովհաննէս անուն զաւակը (1761-1808) ծնունդ տուած է երկու համբաւուր Մխիթարեան Միարան — կրօնաւորներու, որոնց առաջինը Քերոպիէ ծանօթ է Հ. Գեորգ անուամբ, երրորդը՝ Հ. Երուստի, երբ Արքեպիսկոպոս Միւնեսց, և երկրորդը՝ Մեքարիէ: Հ. Երուստի, երբ Արքեպիսկոպոս Շիւրակայ:

բեմասաց, Սոմալեան Աբրահօր ժամանակէն սկսեալ և անոր կենդանութեանն իսկ իր անձին վրայ կեդրոնացուցած էր իր Միաբան — Կարգակիցներուն բացառիկ փոտահութիւնն ու սէրն, որուն միաձայն և բացարձակ քուէները շախկած բաղմեցաւ Սոմալեանին թափուր թողած արքեպիսկոպոսական և արբաշայրական աթոռը:

Իր առաջնորդութեան առջի տարիները, Ս. Ղազարու Միաբաններուն մէջ մէկէ աւելի ընտիր և հասունցած ոյժեր կային, ասոնք տարակոյս չի կայ թէ պիտի կրնային գերազանցել իրենց նախորդներն այսպիսի ձեռնհաս, կարող և զրոյց սիրահար Աբրահօր մը գաւազանին ներքեւ, եթէ սակայն կրօնական պարագաներ և այս երեսէն ծագած ներքին անհասկնալի պառակտումներ չի գային սասանեցնել Ս. Ղազարու գոյութիւնը. ապա թէ ոչ ով կրնար յուսալ թէ Հ. Սարգիս Թեոդորեան մը, Հ. Գարրիէլ Այվազովսկի մը և զեռ ուրիշ քանի քանի յուսալից Միաբաններ պիտի ոչինչ ըլլային և աչքանային (1):

1. Թէոդորեան և Այվազովսկի Հարց նկատմամբ արտայայտած կարծիքս շատերուն շիզօրուն դպաւ: Այսպէս հետզհետէ Մանղու մէի և Լոյսի մէջ, Աբր. Այվազեան և Հանեան հրապարակագրերը ջանացին հակառակն ապացուցանել: Թիւր մեկնութիւն մը արուեցաւ զրաժիս. յայտնած կարծիքս շղարշի և վեղարի

Կրօնական փծուն խնդիրներ Միաբանութեան վարկին մեծ հարուած մը տուած էին Հոռոմայ առջև. արդէն Սոմալեան Աբրահօր ժամանակէն Պոլիսէն Գոդիձցի Վարդապետներու մաս մը իր ամբաստանութիւններուն առարկայ ըրած էր Ս. Ղազարը. ասոնց համար իւրաքանչիւր Միսիթարեան Վարդապետ a priori կասկածելի էր: Mekhitharista գիրքը, Բագրատունիին տուած պատասխանը և Այվազովսկի Հ. Գարրիէլի Իզմիրի Ազդարարիկ մէջ հրատարակած մէկ պատասխան յօդուածը՝ ծնունդ տուին անհաճոյ անհամաձայնութեանց, Բարիզի Մուրատեան Վարժարանի անցքերուն. ի լրումն դժբաղդութեանց երբ Հասունեան և Հակահասունեան վէճերն ալ ծագեցան, Միսիթարեան Միաբանութիւնը ծանրապէս տագնապեցաւ և վտանգեցաւ:

Այս պարագաներու բերմամբ Հիւրմիւլդ Գէորգ Արքան թէ՛ ներքնապէս իրեն ստորագաս Միաբաններուն հետ գործ ունեցաւ և թէ՛ արտաքսապէս ալ աշխատեցաւ իր

փոխանակութեան վրայ չ'էր. զրականութեան համար Թէոդորեանին և Այվազովսկիին կեանքը նշանակութիւն չ'ունին. թէ ասոնք աւելի մեծ ծառայութիւն մը կրնային հայ Իպրուսթեան մատուցանել յայտնի ճշմարտութիւն մըն է. յամենայն դէպս ցաւալի էին այն կրօնական պատճառներն, որոնք ստիպեցին այս երկու վարդապետներն ալ անշքանալու, զէթ զրական աշխարհի առջև:

Միաբանութիւնը բնաջինջ ըլլալու հաւանականութենէ ազատել. այսպիսի տաք պայքարի և մահու կենաց ձգտումներու մէջ չ'էր կրնար բնականապէս իրեններուն գրական գործունէութիւնը մտրակել: Ստոյգ է թէ ինքն չ'ունեցաւ իր հանճարին և հմտութեան (1) համապատական գրական կեանք, բայց ինքն փրկեց Միաբանութիւնը, սիրահասկեցաւ Պառնապո (Barnabo) ծիրանաւորը և չէզոքացուց Հասուն Նախագահ Արքեպիսկոպոսին և յետոյ կաթողիկոս — Պատրիարքին հնարքները:


Թէև Հիւրմիւզեան Գէորգ Արքան ուրացաւ իր գրական եսը և զոհեց իր կեանքը Միաբանութեան գոյութեան ու սիրոյն, բայց և այնպէս երբեք չի զլացաւ իր աշակցութիւնն այն միաբաններուն, որք արդէն գրականութեան մէջ համբաւ ունէին, այսպէս իր եղբօր՝ Հ. Եղուարդին, որ արդէն ժամանակակից էր և հետևող մը Բագրատունի Հ. Արսէնին և արքեպիսկոպոս Երակայ անուանական տիտղոսով Բրորականտայի Հայ-հռոմէական աշակերտ-կղերիկոսներուն ձեռնադրիչ Եպիսկոպոսն էր:

1. Սքանչելի հայրենադէտ մըն էր. թարգմանած է Գոռնէյի՝ Պոյիկոստ, Ռասիկի՝ Գորդեան, և Պառտալոռի՝ Առանձնախօսաչիւնները. բայց աստի բազմաթիւ անտիպ գրութիւններ ձգած է, ընդարձակ նամակներ, որք առնչութիւն ունին իր ժամանակի կրօնական լսնորաց, անձանց և դիպաց հետ:

Հ. Եղուարդ Հիւրմիւզ 1799 Յունուար 30ին ծնած է և 1876ին Հոկտեմբեր ամսոյ 26ին՝ 77 տարեկան վախճանած է:

Բագրատունի Հ. Արսէն կանուխէն վերահասու եղած էր Հ. Եղուարդին սուր և բանաստեղծական հանճարին. այո, արտակարգ կամբացառիկ հանճար մը չ'էր, բայց համարեա թէ քնքուշ գրիչ մըն էր, որուն հայերէն գրարաւ լեզուն միշտ հմայիչ, միշտ գողոր և միշտ ալ սիրուն եղած է. իր լեզուին մաքրութեան, իր սահուն ոճին իրեն կարգակից Միաբաններէն ոչ ոք հաւասարեցաւ. խրթին և խժալուր գրարաւ մը չի գրեց երբեք: «Նոյն հոգի կամ միտք՝ նմանօրինակ իմն շնորհօք օժին զնորա և զանյօդական ձայն բանաւոր, զշարակարգութիւն բանիցն ասեմ՝ յարամեան բարբառ, զոր՝ որպէս ճարտար բրուտ զկան կախուղ լմելով՝ այնպէս ամոքեաց և հեշտալուր կարգեաց, և յինքնաստեղծ բանսն և ի թարգմանութիւնսն անբաւ, որպէս զի և ըստ այսմ ոչ փոքր և աննշան մասին՝ տինա և ի տիրագորիս, ոչ զանգիտեմ՝ նոր ոմն Շնորհալի գեղեցկագիր ասել զնա և ճարտար թարգմանիչ, և աստատին գոհութիւն երախտեաց մատուցանել նմա ի դիմաց դարուց ապասնեաց մերոց հայերէն դպրութեանց, նոցա թողեալ զիմ թերին լնուլ՝ որպէս ես կանխեմ զնոցայն (1)»: :

1. Տես. Բազմավէպ Հանգիսարան, Հատոր ԼԳ: Եռամսեայ Գ. Պրակը. Երես 549:



Գեր. Ե. Հիշրուիչ.

Հոս իր կենսագրութիւնը հրատարակե
անկարելի է, որովհետև ամբողջ կէս դարու
մը գրական գործունէութեան համար հա-
տորներ պէտք են ('). Իր բազմաթիւ գրու-
թիւններն ու իր տիպար թարգմանութիւն-
ներն, որոնց ցուցակը երկար է, արդէն յայտ-
նապէս մատնանիչ կ'ընեն թէ տոհմային
լեզուն և բանաստեղծութիւնը ինչ կը պար-
տին իրեն:

Իր հրատարակած գրքերն երկու դասա-
կարգի կրնանք բաժնել:

ա. Թարգմանածներն և թ. ինքնա-
հեղինակութիւնները:

1. Արդէն միևնոյն բանն ըսած է նաև Բազ-
մալէպ, իր Արորդ պրակին մէջ, ուր կը յայ-
տարարէ թէ, « յորժամ լուիցէ յախուռն և
անպարադէտ ներկայ, այլազգ նկատէ և բար-
բառի սղջախոհ ապագայ. մեծ ակնկալութիւն
է թէ և մերոյ տոհմիս ցանկալի ապագայ
պատիւ և պարծանս տաճարի կրօնից իւրոց և
դպրութեանց համարիցի գերկոսին հարազատ-
սըն Հիւրմիւզեան Նպրահոպսուես, իբրև զայդս
սխրալիս, ոչ զիւրազիւտս և գիւրանմանելիս.
և եթէ ոչ դանդաղեցի ի նշմարել ի Տէր Ն-
դուարդ զքաղցրանանչ բարս և լեզու յատ-
կանուանելոյն Շնորհալի, ոչ զլասցի և Տեառնս-
Վեորդայ՝ զերիցու նորին հարազատի զվկայա-
սէրն Գրիգորիսի՝ վսեմական սգի և աստուա-
ծախօս բերան, հանդերձ ազգային նախանձու...
Տես անդ Երես 347:

Առաջին դասակարգէն են Հնախօսուչիւնք Ռոյիկի, 6 Հատոր, Անարարսիսի Ռշէն-րոչիւնք, 6 Հատոր, Վիրգիլոսի Ենեակասնն ու Հովոռակասնը. զորոնք թէ յանգաւոր և յանյանգ հայկական շափով թարգմանած է, Տակիտոսի Տարեգիրքը, Ֆենելոնի Տելեմաքը, Մանցունիի Խօսեցեալքը, Կրտսեր Ռասինին Կրօնքը, Մէնբիէրի Պոդ և Վիրգիլեկէ, Մե-շագգասիոյ Թատրերգոչիւնները, Յլորիանու Շոռնա Պոնպիլոսը, Սիպերիոյ Արտու-կանները, Բելիսարն ու Մարկ - Աւրելիանոս կայսեր խրատական քրքրքը:

Ինքնահեղինակութիւններ են, Բոչրաս-տան, Մաղրանքն չափաւ, Առակք, Յարատու-քիւնք ի Յոք և ի Սաղմոսս, Տեսական և բարոյական Ստոռաժաբանոչիւն (4 Հատոր), Փիլոքի կամ Ստոռաժաբանք, Հովիւ Հոգևոր, (հինգ Հատոր), Հոչր Սիւրոյ, Զրօսարան Տօ-նից, Բարգիրք աշխարհաբառ և Գրաբառ, Դրոնք Հայ, շատիկ և խալ. Բերականոչ-քեանց, ձարտասանոչիւն, Արտեստ Բեր-դոչոչքեան, Դիցարանոչիւն:

Ըստ Նոր Մտենագրութեան հեղինա-կին, Հիւրմիւզ « Հ. Եդուարդին զրութեանց մէջ առաջնութեան պատիւն ունին Տաղերը, Գեղօնք և Տուարածականք: Բոչրաստան կոչուած քերթուածի մ'ալ հիղինակ է, որուն մէջ Տըլի Գաղղիացւոյն համանուն երկասի-րութեան հետեւելով, պարտիզաց և ծաղկանց գեղն ու մշակութիւնն երգած է: Իր հմուտ և վարժ գրչին արդիւնք են Վիրգիլեայ

Ենէականին կրկին թարգմանութիւնք, յան-գաւոր (1845) ու հայկական կոչուած հին շափով (1878). Հովուերգութիւնք Վիրգիլի⁽¹⁾ և այլն:

Երևակայ Արքեպիսկոպոսին քերթողական համբաւը սակայն կը սկսի Մաղրանք չափաւ աղօթագրքով, զոր անկարելի է գէթ քերթու-զական արուեստի տեսակէտով կարգալ և չի զարմանալ⁽²⁾:

1. Տես անդ. Երես 461:

2. Հիւրմիւզ Եդուարդ Արքեպիսկոպոսին մահը մեծ ցաւ պատճառեց եւրոպական և գիտական շրջանակներու մէջ. իր մահը սակայն ամէնէն աւելի վատիկանեան Ֆուլիսներուն մէջ խօսակ-ցութեան նիւթ եղաւ: Բրոքականտայի կէս պալատնական թերթը Osservatore Romano սա բառերով և խորհրդածութիւններով կը գուժէր Հիւրմիւզ Եդուարդ Արքեպիսկոպոսին անակն-կալ մահը:

« Abbiamo il dolore di annunziare l'amara perdita che fece la religiosa Congregazione de' Mechitaristi di Venezia nella persona di S. E. R. Monsignor Edoardo D. R. Hurmuz, suo rappresentate presso la Santa Sede, avvenuta la mattina del 26 Ottobre, alle ore 3 antimeridiane.

« Fu uomo di vita integerrima, di costumi mitissimi, di pietà insigna e di dottrina non ordinaria. Consacrò quasi interamente la sua vita nell'esercizio dei suoi doveri religiosi e nello studio: tradusse in armeno per la edu-

Այս ժամանակամիջոցին նշանաւորագոյն դէմքերէն մին է նաև Պապիկեան Հ. Հմայեակ վրդայ, թուարան հեղինակութիւն և Բագմալէպի ամենէն արդիւնաւոր յոգունածագիրներէն մին, որոյ գրքերը մէկէ աւելի սերունդներու օգտակար եղած են: Նմանապէս անմոռանալի գիտական միաբան մըն էր նաև Այվազովսկի Հ. Գաբրիէլ, հմուտ պատմաբան, կարող գրիչ, լեզուագէտ, որ տարբեր հանգամանաց և պարագայից մէջ մատենագրական տարեգրոց մէջ ուրիշ անուն մը պիտի ունենար (1):

Ուշագրաւ գրական գործունէութիւն մըն ալ ունեցած է Հ. Արրախաւ վրդայ. Ճարեան, Պոսեցիին, որ 1820ին ծնած և 1894ին վախճանած է:

Ընտիր Գաստիարակ-ուսուցիչ մ'եղած է և հասցուցած խումբ մը նշանաւոր վանական և աշխարհական շրջանաւարտներու, որոնց

cazione dei suoi nazionali moltissime opere, latine, italiane e francesi, attinenti la maggior parte alle litteratura e alle scienze sacre, oltre che furono frutto del colto suo ingegno.

« La sua memoria perciò sarà ognora in benedizione in quanti il conobbero ».

1. Այվազովսկի Հ. Գաբրիէլ վարդապետին Միաթանութիւնէ հետնաւրը մեծ ցաւ պատճառած է անխտիր Ս. Ղազարու Միաբաններուն, իր յեշտաակը ղեռ ցայտօր կենդանի է Մայր վանուց մէջ:

մեծագոյն մասը գրական դէմքեր եղած են: Հայկաբան, լեզուագէտ և քաջ յունագէտ էր, իր գլխաւոր երկասիրութիւններն են աշխարհարառ համառօտ Երկրաշափոթիւն 1843ին տպուած, Պատմութիւն Ազգաց 1846ին լոյս տեսած, Պատմութիւն Գաղղոյ, կատարեալ և ընտիր գործ 1871ին հրատարակ ելած. Ագրիկոլա, Տակիտոսի լատիներէն բնագրին թարգմանութիւնը. իր գլխաւոր գլուխ գործոցը սակայն, որ օտար և ազգային բանասիրաց մտադրութիւնն իր վրայ հրաւիրեց, իր 1877ին հրատարակութեան տուած Եւսեբիոսի Պատմութիւն Եկեղեցոյ գործն է, Ե. Գարու թարգմանութիւն մըն է գիրքս. որուն սկզբնական բնագիրն ազուլեայ և դժուարհասկնալի ըլլալուն, կրկին թարգմանած է, հանդերձ նախնեաց թարգմանութեամբ և հարագատ բնագրին պատճէնովը:

* * *

1876ին Օգոստոս ամսոյ մէջ Հիւրմիւզեան Գեորգ Արքաւոր յաջորդեց Հ. Իգնատիոս վրդայ. կիւրեղեան Տրպալգոնցին:

Գժուարին հանգամանաց մէջ կիւրեղեան Իգնատիոս Արքեպիսկոպոսն ստանձնեց Մխիթարայ յաջորդութիւնը: Միաբանութեան ներքին կեանքը զօրաւոր ձեռքի և բարենորոգման պէտք ունէր, արտաքին խոչնդոտներ կային, բարեկամ-թշնամիներ, որոնք

առթի մը կը սպասէին բամբասելու և ամբաստանելու համար Հոմի առջև Մխիթարայ Միարանութիւնը: Անոնք որ ընտրեցին այս Տրապիզոնցի Աբբան, գործնական արգիւնք մը ձեռք ձգեցին, որովհետև այն ինչ ընտրուած, զիտցաւ իր հպատակ կարգակիցներն իր շուրջ հաւաքել, անոնց սիրտ տալ և քաջալեր ըլլալ:

Իր օրով Մխիթարեանք սկսան օտար կըրթութեան պէտքը զգալ, երեսասարգ վարդապետներէն ոմանք Եւրոպայի Համալսարանները խրկուեցան, ափսոս սակայն որ այս նոր ուղղութիւնը յարատև շարունակութիւն մը չ'ունեցաւ: Ասոնք սակայն օգտուեցան և ընդդրկեցին յեզոռական, իսկապիտանական և արտասկան նոր ուղղութիւնը:

Վենետիկոյ Մխիթարեաններուն անդրանիկ քննադատ-բանասէրն եղաւ Հ. Արսէն վրդպ. Սոքրեան՝ Պոլսեցին, որ 1882ին և Յուլիս ամսոյ 26ին ծաղիկ հասակին մէջ վախճանած է:

Հայկարան, լեզուագէտ և քննադատ պատմագիր և ապագայ խոստացող միաբան մ'էր Սուքրեան վարդապետ, որ քննադատութեան ճիւղն ընդգրկող առաջին Մխիթարեանն է. քաջ հմուտ Հայ, Լատին և Յոյն, Սարի լեզուաց, յաջող բանասէր մ'եղաւ և որուն մահը սակայն տոհմային գրոց բրոց պատմութեան մեծ և անփոխարինելի կորուստ մըն է: Իր Եւրոպայի Տրապիզոնցի իշխանը, Սոկրատայ և Տիմէոսի պաշտպանու-

թիւն մը, նախնեաց թարգմանութիւն մ'է, զոր հրատարակեց հնախօսական և քննադատական ծանօթութիւններով և յոյն բնագրին հետ համեմատելով: Երբ 1877ին այս հրատարակութիւնը գրական հրապարակ ելաւ, Հ. Արսէն Սուքրեանի վրայ մեծ մեծ յոյսեր գրուեցան. այս յոյսերը պիտի իրականութիւն գտնէին եթէ վաղահաս մահը, արգիւնք իր օրն ի բուն չարաչար աշխատելուն, չի գար և չի բեկանէր իրեն սպասող խոստմնայից ապագան: — Եւրոպայի Միտրոպոլիտ 1881ին հրատարակուած է և յոյն բնագրին վրայէն թարգմանութիւն մըն է ընտիր հայկարանութեամբ:

Հայր վկայեալ տոհմային Մատենագրութեան և իսկապիտան կըստարտ միտք մըն էր Հ. Գարեգին վրդպ. Զարիսկանյան, Պոլսեցի, որ 1901ին վախճանած է:

Խոնարհ, հեղահամբոյր եւ անպաճոյճ ճգնակեաց կրօնաւոր մըն էր Հ. Գարեգին, կատարեալ գիտուն Մխիթարեան մը, որ հակառակ իր արտաքին effacé նիստ ու կացին մեծ հանճար մ'եղաւ, գէթ «Հայր տոհմային Մատենագրութեան» տիտղոսին արժանանալու աստիճան անխոնջ աշխատող մ'եղաւ մինչև իր ալեոր հասակը և իր անխոնջ աշխատութեամբ անմահ անուն մը թողուց Հայ Գարեգութեանց տարեգրութիւններուն մէջ:

Սեպհական հեղինակն է Հայկական ճիւղ Գարեգիւն կոչուած աշխատասիրութեան, որ



Ն. Գ. Զարրիսևայեան

1865ին և 1876ին կրկին տպագրութիւններու արժանացած է. ազգային բարձրագոյն վարժարանաց համար յատկապէս պատրաստուած և յօրինուած դասագիրք մըն է աշխարհաբան լեզուաւ, ուր բանասէր հմուտ Մատենագիրը Գրորդ դարէն մինչև ժ. Գրորդ դար եկող գացող իւրաքանչիւր մատենագիրներուն կենսագրութիւնը կը պատմէ և աւնոնց գրութեանց ոճին, լեզուին և յառաջ բերած գրական ազդեցութեան վրայ կը ձևուէ. էր «Պատմութիւնն և նախերեկն նոր Դրսրոսքեան» երկասիրութիւնն ալ, ազգային վարժարանաց համար պատրաստուած դասագիրք մըն է, նմանապէս աշխարհաբան, ուր ժ. Գրորդ դարէն մինչև ժ. Բրորդ դար տոհմային գրիչներուն և հեղինակներուն կեանքն ու զօրժերը կ'ուսումնասիրէ: Նոր Կարութեան Պատմութիւնը 1878ին տըպուած է:

Պատմութիւն Միջին և Նոր Դարաց, Պատմութիւն Յունաց, Հռոմայեցոց և Հարց Եկեղեցոյ անուամբ երկու ուրիշ մատենագրութեան դասագիրքեր ալ յօրինած է:

Գանձ մըն էր նա տոհմային Կարութեան, խղճամիտ կենսագիր մը ազգային հեղինակաց և խիստ քննադատ մը մատենագրական գրուածոց. ամէն անգամ որ իրեն կ'ունկնդրէինք այս նիւթերու վրայ դասախօսութեանց ժամանակ նոր տեղեկութիւն և նորագոյն ալ լոյսեր և խիթեր կ'ունենայինք:

— Բացառիկ տաղանդի բացառիկ ալ կենսա-

գիր պէտք է, ըսած էի Քաղաքատունի Հօր նկատմամբ: Թէ ուրիշ ի՞նչ յարմարագոյն բառ մը կրնամ գործածել հանդէպ Հ. Ղևոնդ Վրդպ. Աղիշակի, ես գոնէ իմ մասին կարող եմ լինակի չ'եմ գտնել: Կենսագրել իր կեանքն ու պատմագրել իր գրական գործունէութիւնը բազմահատոր գրքերու կը կարօտի: Թողով աւելի կարող գրիչներու այս պարտքը, կը բաւականանամ յայտարարելով թէ մէկ քանի դարեր միայն կրնան ծնել Աղիշակի նման դէմքեր (1):

Արդի կենդանի վարդապետաց վրայ ալ տեղեկութիւն տալ անժամանակ է, որովհետեւ ասոնց մէջ կան այնպիսի գրական դէմքեր, որք անշուշտ մտաւոր ապագայի մը մէջ յաջող և լաւագոյն կերպիւ պիտի գիտնան գերազանցել իրենց նախորդները: Ասոնց գասակարգին մէջ կը գտնուին ընտիր և յուսալի ոյժեր. այսպէս Հ. Մանուէլ Գալուսի, ուսումնական չափագէտ և արուեստասէր միտք, որուն Արուեստից Գաղղձայ. բառգիրքը կը բաւէ իրեն անուան համար. Իսապետեանց Հ. Յակոբոս, անխոնջ թարգմանիչ, լեզուագէտ, քաջ անգղիագէտ, որ տոհմային Եկեղեցոյ Պատմութիւնը, Երգերը, Շարականները, Ծէսերն ու Մա-

1. Հրատարակուել է Աղիշակի Հօր մէկ ընդարձակ կենսագրութիւն, աշխատասիրութեամբ Հ. Սիմոն Երեմեանին:

տենագրութիւնն անգղիերէնի թարգմանած և հրատարակութեան տուած է: Հ. Մանուէլ Գալուսեան, հայկարան բանասէր և ներկայ սերնդեան ամէնէն քաջ գրաբառագէտը. Հ. Բարսեղ Սարգիսեան, քննադատ-բանասէր, որուն « Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն » անուն երկասիրութիւնը բաւական նշանաւոր է և հետաքնին:

Հ. Արաւեստ Վրդպ. Տիրոյեան, որուն Նեմեսիոսի, Պիսիտեայ նախնեաց թարգմանութիւնը հանդերձ ներածութեամբ, ծանօթութեամբ և տարբերութեամբ գրչագրաց, ուշագրաւ են. Հ. Յովնակեկ թորոսեան, Հ. Ստեփանոս Սարեան, Հ. Արսէն Ղազիկեան, Հ. Էփրիկեան, Հ. Սիմոն Երեմեան (Բազմալէպի տաղանդաւոր և յաջող խմբագրապետ). և ո՞վ գիտէ տակաւին քանի անձանօթ դէմքեր, որոնք թէև ներկայապէս անձանօթ, բայց և այնպէս օրին մէկը Հայ գրոց բրոց կրկէսը պիտի ընուն ազգի ազգի զուխորոճոց թարգմանութիւններով, երկասիրութիւններով և բանաստեղծական կամ դիւցազներգական հեղինակութիւններով:

* * *

Ժամանակագրական կարգաւ Մխիթար Աբրահօր յաջորդներն են

Ա. Հ. Ստեփանոս Մեղրեան, Պոլսեցի, ծնեալ 1716 Փետր. 23. վախճանեալ 1799-Հոկտ. 4: Աբբայ 1750, Ապրիլ 6:

Բ. Հ. Ստեփանոս Ազոնց Գիշիկու Մաճա-
ճաՀայ ծնեալ 1740 Փետր. 23. վախճա-
նեալ 1824 Յունիս 23, Աբբայ 1800 Հոկտ. 4:

Գ. Հ. Սոքրիստ Սոնայեան, Պոլսեցի, ծնեալ
1776 Յունիս 24. վախճանեալ 1846,
Փետր. 10: Աբբայ 1824 Յունիս 4:

Դ. Հ. Գեորգ Հիւրմիշեան, Պոլսեցի,
ծնեալ 1797 Նոյ. 11, վախճանեալ 1876
Ապրիլ 11: Աբբայ 1846 Յուլիս 2:

Ե. Հ. Իգնատիոս Կիւրեղեան. Տրապի-
զոնցի. ծնեալ 1833 Փետր. 14. Աբբայ
1878 Օգոստոս 23:

* * *

Ա. Հ. Ստեփանոս Մելգոնեան գործի
զլուխ անցած ժամանակ, Միաբանութեան
կ'անդամակցէին 50 վարդապետներ և աշ-
խատաւոր Եղբայրներ (1):

Իր պաշտօնավարութեան առաջին գործն
եղաւ Միսիթար Աբբաշօր շինած և առժա-
մանակեայ կերպիւ Հռոմոյ հաստատել տուած
վանական Կանոնադրութեան թերին լրաց-
նել. գործ մ'որուն արդէն Միսիթար Աբբան
ալ համարիտ էր:

1. « Անձինք Ուխտիս մերոյ ի մահու Միսի-
թարայ Աբբայի էին 50 ի կարգէ վարդապե-
տաց և 7՝ յաշխատաւորաց»: Տես վարք Երեւելի
Արանց, Երես 827:



Ա. — ՄԻՒԹԱՐ ԱՐԲԱՅ

Բ. — Վրդ. Մելգոնեան

Գ. — Արքեպս. Ազոնց

Դ. — Արքեպս. Սոնայեան

Ե. — Արքեպս. Հիւրմիշ

Զ. Արքեպս. Կիւրեղեան

Մելգոնեան մը միայն կրնար այսպիսի աւագ կարևորութիւն ունեցող գործ մը կատարել, որուն կարևորութիւնը հետզհետէ զգալի ալ եղած էր, քանի որ ալ ևս Մխիթար Արքայազարը չի կար, որ ծագած գրծտութիւնները բառնար: Հետևաբար ինքն միայն որ « ընդ ակնհայտիս դատարարական քեանք Մխիթարայ յառաքինի վարս և ի գիտոռքիս ինստոյց » զարգացած էր, կը գրէ Հ. Մաղաք Թէսփիլեանց իր ծանօթ կենսագրական բառարանին մէջ, կրնար այսպիսի ձեռնարկի մը միջամուտս ըլլալ, ունենալով իր անձին վրայ հարկաւոր եղած կողմամտութիւնն ու հեղինակութիւնը. — իր այս ձեռնարկը սակայն պատճառ եղաւ որ Մխիթարայ մահունէն 13 տարի վերջ, որ է 1762ին, չորս Միաբաններ, որոնց յետոյ Պոլսէն եկան և միացան նաև ուրիշ երկու Միաբան վարդապետներ, շախորժեցան Աբրահամ վարչութիւնը: Այս չորս վարդապետներուն առաջնորդն էր Պապիկեան Հ. Աստուածատուր, որուն ալ բազումն ալ եղաւ ձաւրագեան Հ. Միկնա: Վենետիկոյ լատին տիպոգրաֆի Պատրիարքին ալ հայրական միջամտութիւնը աւսոցուա եղաւ: Գուցէ Մխիթար Սերաստացիին ձեռնարկը մի անգամ ընդ միշտ արմատախիլ ըլլար, եթէ Մելգոնեան Աբրահամ յուսահատ և տեղի տալով Միաբաններու մեծամասնութեան և ծերոց աղերսանաց՝ չի դիմէր բարձրագոյն իշխանութեան. որով

չորս Միաբաններն ստիպուեցան Ս. Ղազարէն ելլելու: Այս չորս Միաբաններն էին որ վենետիկէն ուղղակի Գրիէսոյ գացին և յետոյ՝ Վիեննա և որոնցմէ սերած է Վիեննական Մխիթարեաններու բաժանեալ և ինքնագլուխ Միաբանութիւնը:

Այս բաւական ծանր և արկածալից խռովութենէն, ու պառակտումէն վերջ, Մելգոնեան Աբրահամ սկսաւ հսկել և հովուել իր խնամոց յանձնուած Միաբանական հօտը: Այս անդրանիկ և հեղաշարժոյր առաքինի Աբրահամ իրեններուն համար կատարեալ Առաջնորդ մ'եղաւ և կրցաւ իր երջանկայիշչատակ նախորդին ձեռնարկը հաստատուն կողմանի վրայ հաստատել կամ դնել, որով Միաբանութիւնն ալ « ամ ըստ ամէ սկսաւ նոր աւելով մ'աուլցեալ բարգաւաճիլ բազմութեամբ Միաբանից, բարեխառութեամբ և զիտութեամբ (1) »:

Գրական գործունէութեան տեսակէտով Մելգոնեան Աբրահամ չի կրցաւ Միաբանութեան տալ յառաջդիմական մեծ զարկ մը որ աւելի զարգացումի, պարագաներու և ժամանակի գործ մըն էր: 49 տարի շարունակ աշխատեցաւ իրեններուն համար և կրցաւ Միաբանից մէջ սերմանել ընտիր և պողալից սերմեր, որոնք իրմէ ոչ շատ ժամանակ վերջ հասունցան և պողաբերեցան:

82 տարեկան և խոր ծերութեան մէջ վախճանուեցաւ:

1. Տես Վարդ Երեւելի Արանց, Երես 510:

ճանաձ Է Վենետիոյ Մխիթարեաններուն այս անդրանիկ Առաջնորդ — Արքայապետ ու թաղուած՝ վանքի եկեղեցիին մէջ, դասին մէկ անկիւնն, ուր սովորաբար կը թաղուին՝ առանձինն վախճանեալ Արքայք:

Բ. Մելգոնեանի անմիջական յաջորդն է Հ. Ստեփաննոս Վրդայ. Ազունց Գիւլիէս, որուն գրական կեանքն արդէն ուրուագծած ենք: Է այն Արքան, որ իրեններուն գրական կեանքին սատարեց և մինչև իր վերջին շունչը պաշտպանեց գրոց բրոց աշակերտները: Յաջող և արդիւնաշատ պաշտօնավարութիւն մ'ունեցաւ: — Կանուխէն արդէն իր վարքն ու համբաւը մեծ է միաբաններուն մէջ, որք անոր ճկուն կենցաղագէտի յատկու- թենէն զրգուած, զինքն քուէից բացարձակ անաւելութեամբ Արքայ ընտրեցին: Քիչ վերջ պարագաներու բերմամբ արքեպիսկոպոսական աւագ պատուին արժանացաւ, Արքեպիսկոպոս Սիւնեաց անուանական տիտղոսիւ (), որուն պարագաները կ'արժէ պատմագրել:

1. Ազունց, Ստնալ և Հիւրմիւզ Արքաներն անուանական արքեպիսկոպոսներն էին Սիւնեաց աշխարհի: Ըստ տոհմային եկեղ. պատմութեան, Սիւնեաց արքեպիսկոպոսը կաթողիկոսապատիւ էր: Այս տիտղոսը առաջին անգամ Հռոմայ ընդունել տուողները Մխիթարեան Հայրերն եղան, որոնք այսպէս իրենց Արքաներուն սեպհականեցին: Իբր կաթողիկոսապատիւ արք-

Ութ և տասներորդ դարուն վերջերը Հռոմէական Եկեղեցին տխուր կացութեան մը մէջ էր. իր Պետը վախճանած և Կարդինալական Մարմինն ալ աստանդական, նոր ընտրութեան մը համար դժուարութիւններ ծագած էին: Կարդինալները Նափոյէոն Ա. ի ձեռքէն մաղապուրդ ընտրութեան համար մի առ մի հաւաքուեցան Վենետիկ քաղաքն, ուր համեմատաբար ապահով կրնային ըլլալ և ազատ իրենց ընտրութեանց մէջ: Հոն Սան Ճիորճիօ Եկեղեցին ֆօնդալ գումարուելով Քահանայապետ ընտրեցին Պիոս Դ. ըրորդը, որ Վենետիոյ Մխիթարեան Միաբանութեան համակիր և պաշտպան Կարդինալներէն մին էր: — Միաբանութեան հաւաքական դիմումին վրայ, Պիոս Դ. որք այցելեց Ս. Ղազար և այս առթիւ Ազունց Արքան բարձրացոյց արքեպիսկոպոսական պատուին «Կարով մնալով ի Վենետիկ ի վանս իւր՝ առ ի ձեռնադրելոյ զընծայեալս ի քահանայութիւն ի Միաբանից Ուետին», ինչպէս որ կը հաւատտէ Հ. Մաղաք — Թէոփիլեանց:

Եպիսկոպոս ձայնաւոր Պատարագի ժամանակ Գունդ կաթողիկոսական գաւազան կը կրէին և կարմիրներ կը հագնէին: Տարիներ վերջ այս Սիւնեաց տիտղոսը բուն հակաճառութեանց ծնունդ տուաւ, որով Հիւրմիւզ Արքահօր մահունէն վերջ Հռոմ այլ ևս ձանձրացած, այս Սիւնեաց արքեպիսկոպոսի տիտղոսը շնորհեց Լատինածէս եպիսկոպոսի մը:

Գ. 1824ին և Յուսիս ամսոյ 4ին Ագոնցի յաջորդած է Հ. Սոսրիսա Սոնարեան, որուն ընտրութիւնը բաւականէն աւելի խոչնդոտներու բախեցաւ:

Սոնարեան Արքային պաշտօնավարութիւնն, որուն կենսագրութիւնը վերը յիշատակուած է, բեղմնաւոր և ճոխ եղած է զբական տեսասակէտով. 22 տարի անընտհատ աշխատած է հայ Գարութեան համար և անճառ ուրախութիւնն ունեցած տեսնելու իր աշակերտ ձեռնաստուներուն հսկայաքայլ յառաջդիմական քայլերը:

Գ. Իր մահուանէն անմիջապէս վերջ Հիւր միջոցեան Գեորգ վարդապետ 1845ին Յուլիս ամսոյ 2ին Արքայ ընտրուեցաւ: Իր առաջնորդ և արքայ անուանուելը, արդիւնք Միաբան հայրերուն միաձայն քուէներուն, մեծ գոհունակութիւն պատճառեց վատիկանեան շրջանակներուն և Պոլսոյ մէջ, ուր արդէն դեմահատել տուած էր ինքզինքն: Հիւրմիւլ Գեորգ վարդապետ Պոլիս կը գտնուէր Սոնարեան Արքայի մահուանը. կ'ըսուի թէ ընտրողական ժողովին մասնակցելու համար երբ Ս. Ազգար ոտք կոխեց, բովանդակ Միաբանութիւնն մանաւանդ ծերերը՝ զինքն զրկաբաց և բացառիկ ոստիւներով ընտրեցին: Պարզ պաշտօնական ձեակերպութիւն մըն էր ընտրողական ժողովն. այսպիսի ովսանայական ընտրութիւն մ'անշուշտ մեծամեծ արդիւնքներ պիտի ծնէր, եթէ սակայն կրօ-

նական խնդիրներ չի գային կասեցնել Միաբանութեան յառաջագէմ և ծաղկեալ վիճակը⁽¹⁾:

Մեռաւ նա, այլ ո՛չ իր յիշատակը. իննև տասներորդ դարուն երկրորդ կիսուն Եւրոպայի եպիսկոպոսական դասուն մէջ Հիւրմիւլեան Գեորգ արքեպիսկոպոս — Արքան մեծ տեղ մը զբաւած էր. հակառակ իրեն կրած շարչարանաց և անտանելի վշտաց, նա կը վայելէր Եւրոպիոյ բարձրագոյն եկեղեցական շրջանակներուն համակրութիւնը, սէրն ու վստահութիւնն, որոնց թարգման կը հանդիսանար բարիդեան առաջնակարգ թերթերէն մին⁽²⁾:

Իր մահուան: — 1876 Ապրիլ 11 ըստ

1. « Եթէ օտարաց և հեռուորաց աւելազանց իմն թուիցի յիշեցեալս առ ի մէնջ լծորդութիւն ի նմա ցանկալի ձրիցն և շնորհացն ինչ մեզ ընդ այն զարմանք, զի արդարև ի բազմայեղանակ զէպս յետին ամացս յագգիւս, և առանձինն կաթուղիկեայցս, գործ մեծ է ուղղակի նշմարել, որսշել և ճշտել զասհմանս կրօնական և ազգային սգաց, թող թէ այնոքիւք զամենեցուն միտս հանել »: — Տես Բազմավէպ հանդիսարան — Նոր Եար. 2որդ րորդ Տարի. Բ. Պրակ եռամսեայ. Հատար 14. Երես 101:

2. « L' Eglise catholique arménienne vient de faire une perte irréparable en la personne de Mgr. Hurmuz Georges. Archevêque de Sunie, Abbé Général de la Corporation Mékhithari-

նոր Տոմարի, — արդէն մեծ էր իր ազդեցութիւնն ու ձեռք ձգած համբաւն, այնպէս որ օտար Տէրութիւններէն շատեր զինքը պատուանշաններով պատուած էին. այսպէս Օսմանեան Տէրութիւնը շնորհած էր իֆրիկար ականակուռ, Մէծիտիյէ Գրորդ. Ֆրանսականը՝ Լէժիօն տօնէօր, — ասպետութեան կարգ, — Պարսկականը՝ Շիրուխուրշիտ Բ. կարգ., Աւստրիականը՝ Եր-

tes, récemment décédé à Venise dans sa soixante-dix-neuvième année.

« Pour apprécier dignement les vertus de ce grand serviteur de Dieu, il faudrait avoir fait partie de la famille religieuse, dont il était le Chef et le Père, depuis 1846; toutefois si le vénérable défunt aimait à se cacher dans la studieuse retraite de St. Lazare, d'où sont sortis pendant plus d'un siècle tant de remarquables travaux, les devoirs de sa charge non moins que l'éminence de ses talents le mirent en relation avec d'illustres savants de tous les pays et plusieurs Souverains d'Europe et d'Asie honorèrent des plus flatteuses distinctions un mérite qui semblait s'ignorer lui-même.

« Des hommes d'une compétence incontestable se plaindront à célébrer l'élévation de l'esprit, l'étendue des connaissances, la sûreté du goût et tant d'autres qualités éminentes qui distinguaient Mgr. Hurmuz ».

JOURNAL L'UNIVERS

կաթեայ թագ, Բ. կարգ, Իտալականը՝ Սէն-Մօրիս է Ղազար. Ս. կարգ:

Անգամ էր նաև Աստուածարանական Ակադեմիոյ⁽¹⁾, Թիպերեան ձեմարանին⁽²⁾, քանդէսնի Գեղարուեստից, Արկազեան ձեմարանի⁽³⁾ և Բարիլոու Պատմական Հաստատութեան⁽⁴⁾ և Հռոմայ Կուիրինեանց Կաճառին⁽⁵⁾:

Ե. 1877ին Հիւրմիւզեան Արբաձօր յաջորդեց Հ. Իգնատիոս վրդայ. Կիշրեղեան, Տրապիզոնցին, որ երկու տարի վերջ, 1878 Օգոստոս ամսոյն, Տրայանուպոլսոյ արքեպիսկոպոս անուանուեցաւ:

Հօս աւելորդ է մատնանիշ ընել արդի Արբաձօր պաշտօնավարութեան արդիւնքն. խոռվութեան և զրգուութեան դժուարին հանգամանաց մէջ ձեռք առաւ իշխանութեան ղեկը: Թէ իր պաշտօնավարութիւնը քանի՞օն արդիւնաւոր եղաւ Միաբանութեան, յայտնի է իր ներկայ ներքին և արտաքին վիճակէն: Չժամայ ժամանակամիջոցի մը մէջ Կիւրեղեան Արբան մեծ ծառայութիւններ մատուցած է իր Միաբանութեան, որոնց բնոյթին ու տեսակին վրայ կարելի չ'է այժմէն գաղափար յայտնել, քանի որ իր պաշ-

1. Accademia della religione Cattolica.
2. " Tiberiana.
3. " degli Arcadi.
4. Institut historique.
5. Accademia dei Quiriti.

տօնավարութիւնը դեռ երկար տարիներ պիտի շարունակուի:

Բոլորովին ինքնուրոյն, ինքնագլուխ և անկախ Հաստատութիւն մըն է Վիեննայի Մխիթարեան Հարց Միաբանութիւնն, որուն Մայր Վանքէն բաժնուելուն պարագաներն արդէն կ'.

Պոլսոյ լրագրաց մէջ պատմագրած ենք: Վիեննայի Մխիթարեանները Հաստատուած են ի Դրիէսզ 1762ին, իրենց հիմնադիրն է Հ. Ստոռաժատոռ Վրդպ. Պապիկեան, Պոլսեցին, որ ծնած է 1738ին Օգոստոս ամսոյ 5ին. Մխիթար Աբրահօր Ժամանակակիցն է և անոր աշակերտ, որուն մահուընէն ճիշտ 13 տարի վերջ վանքէն գացած բնակած է Դրիէստ: Այս քաղքիս մէջն էր, որ Պապիկեան իր չորս ընկերակից միաբաններով Միաբանութիւն մը Հաստատեց:

Պապիկեան Հ. Աստուածատուր երկաթեայ կամքի, Հաստատուն նկարագրի և թունդ պահպանողական սկզբունքներու տէր էր: Վերջին աստիճան յամու ալ էր. այս յատկութեանց շնորհիւ էր, որ ասանց տասնոց մ'ունենալու գրպանը, կրցաւ Դրիէստի մէջ, ո՛չ շատ հեռի Վենետիկէն, Հաստատել Միաբանութիւն մը որուն ընդհանրական առաջնորդն ու Աբրահայրն եղաւ 1792ին:

Արդէն 1780ին արքեպիսկոպոսական աւագ պատուին բարձրացած էր (1):

Հազիւ թէ Դրիէստի մէջ նորահաստատ Միաբանութիւնը սկսած էր բարգաւաճիլ և գրական գործունէութեամբ օգտակար ըլլալ Ազգին, երբ Նափուէոն Առաջնոյն յաղթական և տիրական բանակներուն առջևէն մտապուրց փախստական, կը ստիպուէր 1810ին փոխադրուիլ Վիեննա և Հաստատուիլ ի ֆրոդերնայպոռկ. 1838ին միայն վերջնականապէս Հաստատուեցաւ ի Վիեննա:

Պապիկեան Աբրան, որուն օրով Վիեննական Մխիթարեան Միաբանութիւնը սկսած էր գրական գործունէութեան, գրական դէմք մը չ'էր, չ'էր ալ կրնար ըլլալ, որովհետև գրականութենէ աւելի իրեններուն ապագային վրայ կը մտածէր: Ամէն բանէ զօրիկ, չքաւոր և երկիցս Հալածական, բնականապէս չ'էր կրնար գրականութեամբ զբաղիլ:

Արկածալից և յուզումներով լի պաշտօնավարութենէ մը վերջ, Պապիկեան արքե-

1. Թէ ինչպէս Պապիկեան եպիսկոպոսած էր, յայտնի չ'է. ես գոնէ կ'անդիտանամ: Անուանական արքեպիսկոպոս էր Էջմիածնի: Պապիկեանէ վերջ ո՛չ մէկ Հայ-հունական եպիսկոպոս գործածած է այս Էջմիածին տիտղոսը: Կը հաւատուի թէ Պապիկեան Աբրան բաւականէն աւելի աշխատած է Հոսմայ մօտ այս տիտղոսը ձեռք ձգելու համար:

պիսկոպոս Աբբան 1824ին վախճանեցաւ (1) և իրեն յաջորդեց Հ. Արխատակե վրդպ. Ազարեան, Պուրեցին, որ Կեսարիոյ փառ-գոսաւոր արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1825ին և պաշտօնավարեց մինչև 1855 Մայիս 10:

Վիեննական Մխիթարեանց ունեցած Ա. աջնորդ Աբբաներուն մէջ հոյակապ և նշա-նաւոր դէմք մըն է Ազարեան Հ. Արիւ-տակէս Արքեպիսկոպոս Աբբան. լուրջ միտք, լեզուագէտ, ճկուն անձ և քաղաքագէտ մեծ դեր խաղացած է Հապսուորկեան և Վա-տիկանեան Քուրիաներուն մէջ. խոստովա-նաՀայր եղած է կայսերական ընտանեաց և Հապսուորկի արքունեաց վստահութիւնը, համակրութիւնն ու սէրը վայելած և իր Միաբանութեան ապագան ու գրամական վիճակը հաստատուն հիմերու վրայ գրած է: Քաց աստի բարեկամ ու խորհրդակալն էր համբաւաւոր Մեղեռնիխ իշխան-վարչապե-տին, Աւստրիոյ Պիզմարքին:

Ազարեան Աբբա՛ն հօր Ժամանակ Վիեննա-

1. Պապիկեան Աբբան իր մահուընէն երկու իրեք տարի յառաջ Վիեննայի Մխիթարեանց Ագոնց Գիւլէն Աբբա՛ն հօր գրաւորապէս առաջ-արկած է երկուց Միաբանութեանց ի մի ձու-լուիլը: Իր այս մտօք և անցուկը մոռցուել ընե-լու սկզբունքով գրած ձեռագիր նամակն ամե-նամեծ զգուշութեամբ դեռ ցայսօր պահուած է Ս. Ղազարու Գիւանաց մէջ: Կաւանդուի

կան Մխիթարեան Միաբանութիւնը մեծ փայլ և ճոխութիւն ստացաւ: Անոր օրովը միայն ծաղկեցան մեզի ծանօթ այն Վիեն-նական Մխիթարեան Հայրերն, որք փառ-քերն են Ազգին ու Միաբանութեան:

Ազարեան Արքեպիսկոպոս սիրահար միտք մըն էր լեզուաց և գիտութեանց. միշտ և ամէն ուրեք քաջալերած է գիտուն միա-բաններն, որոնց գրական գործունէութիւնը գիտէր գնահատել և մտրակել:

Քերական և քաջ հայկարան Չաղլիեան Հ. Վրդանէս վարդապետէն վերջ, նոր գիտ-նական միաբան մը հրապարակ ելած չ'էր: Ազարեան Աբբան, որ եղբայրական նախածէ վառեալ չ'էր կրնար առանց անտարբերու-թեան դիտել Ս. Ղազարու «օձախիւն» ար-տադրութիւնները, հոգւով մարմնով չ'էր կրնար իր հպատակ միաբաններուն հարկ եղած օգնութիւնը:

Այսպէս իր շնորհիւ ամենէն աւելի օգ-տուեցաւ Հ. Պօղոս վրդպ. Յովնանեան, Պուրեցին, որ ծնած է 1802 Սեպտ. 12ին և վախճանած՝ 1884 Գեկտեմբեր ամսոյ 28ին:

Թէ Ագոնց Աբբան արամադիր էր միութեան, բայց ի տես ճերոց յարուցած դժուարութեանց, որոնք կենդանի վկաներ էին անցած դարձա-ծին, իր այս նպատակէն ետ կեցաւ. որովհէ-տե այս տժգոհութեան եկած միացած էր նաև այն մեծաբանակ պարտքն, զոր ձամբադեան Հ. Մինաս վրդպ. ըրած էր Կրիկտիտ մէջ:

Իր երկերն են,

Վարժուչիւն Մանկանց. 1826ին հրատարակուած

Ոռտունական, Բնական և Քաղաքական Սշխարհագրութիւն, 1835ին

Հրահանգք Աստեղագիտութեան 1841ին,

Պատմութիւն Տիեզերական Ժողովոց, 1847ին:

Գրած է նաև Մարդկային լեզուի վրայ քննութիւնը, Ոռտունն ազգային Գաստիարականութեան և Խոսախոյ պատմութիւնը սկիզբէն մինչև 1864:

Գրական միաբան մըն էր նաև Հ. Աղերսանդր Պաշեան, Պուլսեցիին, 1814ին ծնած է և վախճանած ի Հոմմ 1884ին, Դեկտեմբեր ամսոյ 23ին, ուր Հայ կղերականներուն Չեռնագրիչ Եպիսկոպոսի պաշտօնը կը վարէր: Պալճեան Հօր գրական գործունէութիւնն աւելի կրօնական եղած է: Այսպէս եթէ իր « Դիւրիմաց Պատասխաններ » կրօնքի դէմ տարածուած ընդդիմութեանց, Մոդորութիւնը բողոքականութեան ի Հայս, որուն լատիներէնն ալ գրած է, երկասիրութիւնները մեկդի թողունք, կ'ունենանք միայն Հայ և Թուրք Վայելչագրութիւն մը, Բնիկանոց տեսութիւն մը Երկրագնդի վրայ և Ոռտունական ու քնական Սշխարհագրութիւն մը:

- Վիեննական Միթարեանց փառքը սա-

կայն Հ. Յովսէփ Գարրալեան վարդապետն է, որուն զուխ գործոցները տարիներ ու տարիներ վերջ ծանօթացան ազգին:

Առաջին քննադատ Միթարեանը Հ. Գաթրճեանն է, որուն պատմական գիւտերն արդիւնք են իր քննասէր և լուրջ մտքին: Քաջ հայկաբան, լեզուագէտ և բանասէր, Գաթրճեան վարպետ մըն է իր սեռին մէջ:

Անկարելի է կարդալ և չի դարմանալ իր սակեղինիկ հայերէնին վրայ:

Իր հրատարակութիւններն են

Տպագրուած

- Կիկերոնեայ խօսք վասն Տերութեան 1843ին
- Կոչրտեայ վասն գործոց և արութեանց
- Աղերսանդրի Մեծի, 1843 »
- Գիտք Կիսրիսանոչ վասն միտքեան Եկեղեցեաց 1846 »
- Իրաւախոնի կեղծիք և իրաց ձընարտութիւնը 1873 »
- Բան դարմանական ի մահ Պետրոս Եղրընէակի 1875 »
- Պատմութիւն Մասնագրութեան Հայոց 1851 »
- Տիեզերական Պատմութիւն Բ. Հատոր 1849-1852
- Հանգիստ Երանելոյն Յովհաննոչ Հայ. լատ. 1887:

— Գաթրճեան Հ. Յովսէփ կը պատկանի քննադատներու այն Դպրոցին, որուն նպատակն է կարելի եղածին չափ հեռի մնալ սոցիալիստներէն: Ազգային Եկեղեցւոյ և Պատմութեան մէկէ աւելի կէտերը քննադատութեան բովէն անցուցած է և սքանչելի գիւտեր ըրած: Իր գլուխ գործոցը սակայն Հանգանակ Հաւատոյ և Պատարագամատոյցն է, զորոնք տարիներ վերջ իրեն արժանի Քննադատ Միտք մը, Հ. Յակոբոս վարդապետ Տաշեան հրատարակած է, հմուտ ծանօթութիւններով:

Ազարեան Արբազօր պաշտօնավարութեան միջոցին ծագկած են նաև Հ. Կղեմես Սիպիլեան, նշանաւոր հնախօս, Հ. Բերովքի Իսպիկեան, հեղինակ-Մատենագիր Ռսիեգալու Մատենագրութեան, Հ. Սյրսպիտն Էմիւնեան, ծանօթ հրատարակիչ Գաղղ. Հայ և Տանկ. երեքլեզուեան բազմքերն:

Ազարեանի յաջորդ Պօղաձեան Հ. Յակոբոս Արքեպիսկոպոս Արբազօր ժամանակը Վիեննայի Միսիթարեան Դպրոցը չի կրցաւ իր սկզբնական գործունէութեան և կեանքին հաւատարիմ մնալ:

Գաղատացի անձուկ միտք մըն էր Պօղաձեան Արբազ, որ աւելի իրեն հպատակ Միարանները կրօնական ամենախիստ ուղին աւաջնորդեց. իր երկարամեայ պաշտօնավարութիւնը օգտակար եղած չէ Միարանութեան, որ գուցէ մի անգամ ընդ միշտ ընկճէր, եթէ

Նախախնամութիւնը չի յարուցանէր Ըստկարեաններ, Հ. Ղևոնդ Յովնանեաններ, Այտընեաններ:

Պօղաձեան Հօր մահուընէն վերջ, արբազայրութեան աթոռը ժառանգեց Հ. Վարդաբե Ըստկարեան, Հունգարահայ և կեռլացի:

Երիտասարդ քառասնամեայ Արբազ գուցէ մի անգամ ընդ միշտ իր Նախորդին պաշտօնավարութիւնը մտցնել տար եթէ Երկինք չնորհէին իրեն տարիներու շարք մը: — Աղատախօհ, համակ աւիւն և ուսումնասէր, Ըստկարեան Արբազ կուռքն էր երիտասարդ միարաններուն, որոնց գրեթէ մեծամասնութիւնն իր սաներն էին: Սիրելի (persona gratissima) Ֆրանց Եողէֆ կայսեր և Աւստրիոյ Հունգարիոյ Պետութեան, Ըստկարեան Արբազ կրցաւ իր եռամեայ պաշտօնավարութեան միջոցին Միարանութեան վարկը բարձրացընել, երևմուտքը կարգաւորել և մանաւանդ վստահութիւն, արիւթիւն, համակրութիւններնչել Միարաններուն: Եթէ այս Արբազ կարենար ընդ երկար պաշտօնավարել, ապահովապէս իր Միարանութեան ոսկեդարը պիտի կարենար ողջունել և օգտակար հանգիստանալ Ազգին, զոր կը սիրէր մեծապէս Մաճառի տաք և կրակուրոց սիրովը:

Կանխահաս մահը սակայն իրեն յաջորդելու աւագ պատուին կոչեց 1886ին Պոլսեցի Հ. Այսեկ Այտընեան վարդապետը:

Այտընեանով Վիեննական Դպրոցը յարութիւն առաւ և սկսաւ նորէն զբաղել մա-

տենագրութեամբ: Թէ Քննական Քերականութեան Հեղինակն ինչպիսի՞ ոգիով օժտեց իր խնամոց յանձնուած Միարանութիւնը, աւելորդ է հոս պատմագրել: Ըստ մեր սկզբան պիտի չ'ուրուագծեմ իր պաշտօնավարութիւնը, քանի որ դեռ կենդանի է Նա:

Իր օրով Միարանութիւնը համարեա թէ նոր ոյժ և կենդանութիւն զգեցաւ. Հ. Ղևոնց Յովնանեան և նորերէն Հ. Յակոբոս Տաշեան, Հ. Գրիգորիս Գալիկեարեան և Հ. Գ. Մենկվիշ ծաղկեցան և օգտակար ու գնահատելի երկեր արտադրեցին:

Հիներէն յիշատակելի են Հ. Դուկաս Տերտրեան, Հ. Բարսեղ Նորիսեան, Հ. Սաղաթիկեան, Հ. Միքայել Վեցմառեան, Հ. Դաւիթ Ուզունեան և նորերէն վաղաձեռնին ու անմոռանալին Հ. Սերովրէ Տերվիշեան, Հ. Եփրեմ Չագրսեան, Հ. Գրիգոր Գովրիկեան, Թոռոնեան Հ. Թադեոս և Հ. Նիկողոսյոս Աշգերեան, որոնք օգտակար եղած են ազգային Գպրութեան:

Թէև Վիեննայի Մեիթարեան Միարանութիւնն անդրանիկ եղբոր Վենետիկոյ Մեիթարեան գործունէութիւնն ունեցած չ'է և ոչ ալ անոր նման հասցուցած մեծ դէմքեր, բայց և այնպէս կոչուած է նշանաւոր զեր մը ստանձնելու առհմային պատմութեան, գրականութեան բանասիրութեան և դպրութեան մէջ:



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

[Faint, illegible text at the bottom of the page, possibly a signature or stamp]

« Ազգային գրադարան



NL0382076

057150

891.99.092

lx - 28